№ 137 ԵՐԵՔՇԱԲԹԻ ՅՈՒՆԻՍԻ 27

1906

ԵՐԵՍՈՒՆՉՈՐՍԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ԵՐԵՔՇԱԲԹԻ ՅՈՒՆԻՍԻ 27 № 137

Տարեկան գինը 10 րուբլի. կէս տարվանը 6 րուբլի. առանձին համարները ամեն տեղ 5 կոպէկով.

Թիֆլիսում գրվում են խմբագրատան մէջ.

Մեր հասցէն. Тифлисъ, редакція «Мшакъ».
կամ Tiflis, Rédaction «Mschak».

Տելեֆօն № 253.

ՄՇԱԿ

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի և տօն օրերից)

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով.

Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր տողատեղին 10 կոպէկ.

Տելեֆօն № 253.

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ԲԱՑՎԱԾ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

ՄՇԱԿ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԼՐԱԳԻՐ

ՆԵՐԿԱՅ 1906 ԹՈՒԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ

(34-ՐԴ ՏԱՐԻ)

ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆԸ. «Մշակի» տարեկան գինը 10 րուբլի է, տասն և մէկ ամսվանը նոյնպէս 10 ր., տասն ամսվանը՝ 9 ր., ինն ամսվանը՝ 8 ր., 8 ամսվանը՝ 7 ր., եօթ և վեց ամսվանը՝ 6 ր., հինգ ամսվանը՝ 5 ր., չորս ամսվանը՝ 4 ր., երեք ամսվանը՝ 3 ր., երկու ամսվանը՝ 2 ր. և մի ամսվանը՝ 1 րուբլի։ յուլիսի 1-ից մինչև 1 հոկտեմբերի 2 րուբլի։

ԱՐՏԱՍԱՀՄԱՆԵԱՆ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ. Ամերիկայի բաժանորդները պէտք է վճարեն տարեկան 6 դոլլար. Եւրոպայի բաժանորդները՝ 30 ֆրանկ. Պարսկաստանի բաժանորդները՝ 10 րուբլի։

«Մշակին» գրվել կարելի է ԽՄԲԱԳՐԱՏԱՆԸ. (Բազարնայա և Բարոնսկայա փողոցների անկիւն)։ Ստորագրվել կարելի է միայն ամսի 1-ից։

Կայսրութեան ուրիշ քաղաքներից «ՄՇԱԿԻՆ» գրվելու համար և առհասարակ նամակներ և ծրարներ ուղարկելիս, պէտք է դիմել հետևեալ հասցէով։ ТИФЛИСЪ, Редакція „МШАКЪ" իսկ արտասահմանից՝ TIFLIS, Rédaction du journal «MSCHAK».

Յայտարարութիւններ ընդունվում են բոլոր լեզուներով։

ԱՊԱՌԻԿ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ ՉԷ ԸՆԴՈՒՆՎՈՒՄ

Մարիամ Յարութիւնեան և Աթանաս Միքայէլեան Ազաբաբեանները խորին վշտով յայտնում են բարեկամներին և ծանօթներին, առաջինը իր սիրելի հօր, իսկ երկրորդը իր թանկագին աներոջ Նադվորնի սովետնիկ՝

ՅԱՐՈՒԹԻՒՆ ՅԱԿՈՎԲԵԱՆ ԲԷԳԶԱԴԵԱՆՑԻ

մահը, որ տեղի ունեցաւ ամսիս 24-ին, երեկոյեան ժամը 6-ին։ Յուղարկաւորութիւնը տեղի կունենայ այսօր, ամսիս 27-ին, առաւօտեան ժամը 10-ին, (իր բնակարանից Ռտիշչեվսկի փող. № 23) դէպի Մուղնու ս. Գէորգ եկեղեցին, այնտեղից Խօջիվանքի գերեզմանատունը։ 1—1

ՄԱՆԹԱՇԵԱՆԻ ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆԸ

սրանով յայտարարում է, որ այս տարվայ սեպտեմբերի 1-ից բացվում է երեք պատրաստական դասատուն։ Այդ դասարաններում ընդունելութիւնը կը կատարվի քննութիւնով։ Պատրաստական դասատունները մտնելու համար կանոնները և ծրագիրները կարելի է ստանալ առևտրական ուսումնարանի շինութեան մէջ՝ Հալաբար Պրօվիանտսկի հրապարակ, ամեն օր ցերեկվայ ժամը 9-ից մինչև 1 ժամը։ Ուսման լիակատար ընթացքը 6 տարվայ է։ Պատրաստական դասարաններում ուսման տարեկան վարձը քառասուն (40) րուբլի է։ Ընդունելութեան քննութիւնների երբ լինելու մասին առանձին կը յայտարարվի։

(ու.կ.ե.) տռ. 3—5

„Ա. ՓՐԻԴՈՆԵԱՆ և ԸՆԿ." ԲԱՆԿԱՅԻՆ ԳՐԱՍԵՆԵԱԿԸ

սրանով յայտարարում է, որ պետական փոխառութեան I առաջին կարգի վիճակահանի տոմսակները սոյն 1906 թ. յուլիսի 1-ի տիրաժից—ամեն մի տոմսակն ապահովագրում է 5 րուբլի 60 կոպ. չը հաշված մարկայի փողը։

Գրասենեակը վերադիր վճարով կամ հեռագրով տոմսակներ չէ ապահովագրում։

(հ.կ.ե.) տռ. 3—3

ԼՈՅՍ ՏԵՍԱՒ

„ԽԱԹԱԲԱԼԱ"

№ 3

Երգիծաբ.-սատիրական շաբաթաթերթ։ Վաճառվում է խմբագրատանը և լրագրավաճառների մօտ՝ Թիֆլիսում, Բագւում, Գանձակում, Երևանում, Ալէքսանդրոպօլում, Պետրովսկում, Էջմիածնում, Նոր-Նախիջևանում, Արմաւիրում, Կարսում, Բաթումում, Վլադիկավկազում, Ստաւրօպօլում, Մօզդոկում, Աստրախանում, Մոսկվայում և ուրիշ հայաշատ քաղաքներում. խմբագրական հասցէն՝ Тифлисъ, редакція Юморо-Сатирич. журнала «Хатабала».

Խմբագիր-հրատարակող՝ Աստ. Երիցեան

(կ.ե.) 2—2

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Կարիքները շատ մեծ են. Թիւրքահայերի դատը. Վերջին տեղեկութիւններ. Պաշտօնական. Ապերախտութիւն. Շարժումներ. Տեղեկութիւններ գաւառից. Բարեգործական ընկերութեան ժողովը. Ուրուսօվի ներկայացումների տպաւորութիւնը Եւրոպայում. Վերջապէս գտաւ ճանապարհը. Ուսուցչական համաժողով. Նամակ Նոր-Բայազէտից. Նամակ Սղնախից. Նամակ Ներքին Ախտայից. Նամակներ խմբագրութեան. Ներքին լուրեր. ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ.—Նամակ Պարսկաստանից. Արտաքին լուրեր.—ՀԵՌԱԳԻՐՆԵՐ.—ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ։

ԿԱՐԻՔՆԵՐԸ ՇԱՏ ՄԵԾ ԵՆ

I

«Մշակի» մէջ մենք տուինք տեղեկութիւններ այս տարվայ այն դժբախտ պատահարների մասին, որոնց պատճառով պակասել և թուլացել է մեր գիւղերի ապահովութիւնը։

Այնուհետև ստացանք մի քանի նոր դժբախտութիւնների մասին հաղորդագրութիւններ։ Իսկ այսօր զետեղում ենք Լևոն վարդապետի հեռագիրը Նախիջևանի գաւառի փչացած գիւղերի ծանր վիճակի մասին։

Աղէտին ենթարկված գիւղերը անկարող եղան ժամանակին ցանքսեր անելու, նրանց ձեռք բերած սերմացուն մի քանի տեղերում եղել է անբաւարար և իրանք գիւղացիներն էլ անկարող են եղել այնպէս հսկելու իրանց արտերին, առօգման գործին և ուրիշ աշխատանքներին, ինչպէս հարկն է։

Եւ ահա թշուառ հետևանքը։

Գիւղը մի անգամ քայքայվելուց յետոյ անկարող է բուժել շուտով իր վէրքերը և ոտի կանգնել։ Եւ մենք տեսնում ենք, թէ ինչպէս աղէտի ճիրաններում տանջված գիւղացիութիւնը նորից դատապարտված է նոր զրկանքների և տառապանքների։

II

Մեր լրագրի անցեալ համարում մենք զետեղեցինք Զանգեզուրի գաւառի Մինքենդ գիւղի բնակիչների գանգատը։ Նոյնատեսակ և աւելի ևս սրտաճմլիկ հաղորդագրութիւններ ստացել ենք Ալիղուլիքենդ գիւղի բնակիչների մասին, որոնք չեն կարողացել նորից հաստատվել իրանց գիւղատեղում և ցրիւ են եկել զանազան գիւղերում։

Թշուառ վիճակի մէջ են Շարուրի տափարակում Քեչտաղ գիւղի բնակիչները, որոնց գիւղը բոլորովին աւերվել է։ Գիւղացիները այլ ևս անկարելի են համարում գիւղ վերադառնալը, որովհետև վերջինս գտնվում է այնպիսի շրջանում, ուր գիւղացիները անկարող են վտանգի րոպէին օգնութիւն ստանալ միւս հայ գիւղերից։

Եւ հասկանալի է, որ քեչտաղեցիները անկարող լինէին իրանց սեփական հողերը մշակել և մի քանի աշխատանքներ կատարել են ուրիշ գիւղերի հողերում սահմանափակ քանակութեամբ։

Եւ այդպիսի գիւղերի թիւը քիչ չէ նաև Գանձակի, Ջիւանշիրի, Արէշի և միւս գաւառներում։

III

Որքան էլ ծանր լինի մեզ համար խոստովանել, այնուամենայնիւ պարտաւոր ենք արձանագրել այն տխուր փաստը, որ առաջիկայ աշնանը և ձմեռը մենք կունենանք թշուառութեան և կարօտութեան մէջ տոչորվող գիւղացիների մի մեծ բազմութիւն։

Իսկ եթէ մտաբերենք, որ այնպիսի գիւղեր, ինչպէս են աւերված Բագան, Կրզանը, Սարոիները իրանց շրջականերով, Խօյլարը, Ղարադաղլուն, Սէյսուլանը, Ղազանչին, Ուլիա-Նորշէնը և ուրիշ շատերը կարօտ են վերաշինութեան, մենք կը համոզվենք, որ նպաստների և օգնութեան մեծ պահանջ կայ մեր դժբաղդ երկրի մէջ և որ ուրեմն նպաստամատոյց յանձնաժողովները ոչ միայն չը պէտք է կրճատեն իրանց գործունէութիւնը, այլ և պէտք է ամեն ջանք գործ դնեն նոր միջոցներ ձեռք բերելու, որպէս զի կարող լինեն երևան եկած կարիքներին ժամանակին բաւարարութիւն տալու։

Այսպէս է տխուր իրականութիւնը և մենք պէտք է նրան աչքի առաջ ունենանք։

IV

Մեր տեղական յանձնաժողովները պէտք է իրանց վրա մի մեծ պարտականութիւն վերցնեն՝ պարզելու ազգաբնակութեան վիճակը կարելի եղածի չափ մանրամասն կերպով, որպէս զի եղած կարիքների մասին մենք ունենանք ճիշտ գաղափար և կարող լինենք նրա համեմատ հաշուել մեր երկրի կարօտութեան ընդհանուր գումարը։

Եթէ այս տարի մենք անկարող եղանք ամեն տեղ հասցնել այնքան օգնութիւն, որ աղքատ գիւղացին վերականգնի իր տնտեսութիւնը, գոնէ եկող տարվայ համար մենք պէտք է չը թերանանք մեր պարտաւորութիւնների մէջ։

Շատ տեղ գիւղացին կարիք ունի աշնանացանի և մենք պարտաւոր ենք օգնութիւն տալ հէնց առաջիկայ ամիսներում, որպէս զի ցանքսերը կատարվեն լիակատար չափով։

Անկասկած՝ եթէ անցեալ տարի աւելի կատարեալ եղանակով կազմակերպէինք օգնութեան գործը, այս տարի աւելի բաւարար հետևանքներ կունենայինք։

Գոնէ այժմ լաւ գործենք, որպէս զի եկող տարի թերութիւններ չունենանք։

Ա. Քալանթար

ԹԻՒՐՔԱՀԱՅԵՐԻ ԴԱՏԸ

I

Հեռագիրը լուր բերեց, որ Թիւրքիայի հայոց պատրիարք Օրմանեանը ներկայացրել է իր հրաժարականը պատրիարքական պաշտօնից այն պատճառաբանութեամբ, որ իր դիմումները և միջնորդութիւնները մնացել են և մնում են առանց որևէ հետևանքի, իսկ սուլթանը յայտնել է, որ թէև չէ կարող գոհացում տալ պատրիարքի միջնորդութիւններին, բայց որովհետև անձնապէս հաւատում է նրան, ուստի չէ ընդունում հրաժարականը և հրամայում է շարունակել վարել իր պաշտօնը։

Անշուշտ, պատրիարք Օրմանեանի հրաժարականը կապ ունի Սիսի կաթողիկոսութեան խնդրի հետ և Օրմանեան, հետևելով Կիլիկիայի կաթողիկոս Սահակ Խաբայեանի (որ նոյնպէս հրաժարական է տուել) օրինակին, կամեցել է զգացնել տալ այն ծանր աղէտը, որ սուլթանը իջեցրել է Սիսի աթոռի գլխին։

Սուլթանի հրամանով, ինչպէս արդէն յայտնել ենք, Կիլիկիայի կաթողիկոսական աթոռի հասոյթի միակ աղբիւր մի մեծ հողային կալուած, որ կոչվում է Թլանի Ագարակ, գրաւվել է յօրքունիս և որ առաւել զգալին է, հողը յատկացրըվել է չերքէզներին, որոնք, բնակութիւն հաստատելով հայերի մէջ, անշուշտ, նորանոր աղէտներ պէտք է բերեն նրանց գլխին իրանց աւազակաբարոյ և վանդալական սխրագործութիւններով։

Ելդըզի ոճրագործ գահակալը մի անգամից կամեցել է երկու հարուած իջեցնել հայութեան գլխին. նա ոչ միայն զրկում է հայութեան մի ամբողջ կենտրօն իր գոյութեան աղբիւրից, այլև մտցնում է նրա մէջ մի կործանիչ և աւարառու տարր, մի մեծ պատուհաս։

Օրմանեան պատրիարքի և Կիլիկիայի կաթողիկոսի հրաժարականները նորից իրանց վրա են սևեռում Թիւրքիայի թշուառ հայերի ուշքը։ Այն դատը, որ ընդհանուր առմամբ կոչվում է Հայոց հարց, վերջերս գրեթէ մոռացութեան էր մատնվել ոչ միայն Բերլինի դաշնագիրը ստորագրող եւրօպական մեծ պետութիւնների և դիպլոմատիայի կողմից, այլ և այն հայ կազմակերպութիւնների կողմից, որոնք ստեղծվել էին յատկապէս այդ դատի պաշտպանութեան համար։ Թիւրքիայի թշուառ հայ ժողովուրդը լքվել, թողնվել է իր ճակատագրին, միայնակ տանելու այն ծանր խաչը, որ դրվել է նրա ուսերին և այն լուծը, որ կախվել է նրա պարանոցից։

Օգնութեան, փրկութեան ոչ մի յոյս չէ նկատվում։ Վշտալի էր անցեալը, անտանելի և աննկարագրելի նրա է տանջալից ներկան և մռայլ, խաւար, անորոշ, յուսահատական նրա ապագան։ Պէտք է որոնել կամ նոր միջոցներ, կամ այլ եղանակներ. խթանի դէմ աքացել չէ կարելի, ազատագրական շարժումը պէտք է տանել, մղել մի նոր խողովակով, որ կարողանայ ապահովել գոնէ մի մօտաւոր տանելի ապագայ, այլապէս ջնջման սիստեմը, որ այժմ գործադրվում է Թիւրքիայում հայերի վերաբերմամբ, կարող է հասնել իր նպատակին։

Այդ հարցը, այն է Թիւրքահայերի համար մօտաւոր, փոքր ի շատէ ապահով վիճակ ստեղծելու հարցը, դարձել է և հայասէր եւրոպացիների հոգսերի առարկան, ինչպէս յայտնի դոկտոր Րայնոլդ, ֆրանսիացի քաղաքական գործիչ Պիէր Քիյառ և ուրիշներ։

Դոքտոր Րայնոլդ, կարդում ենք «Pro Armenia» հանդէսի մէջ, այն կարծիքն է յայտնում, որ հայերի ջնջումը շարունակվում է զանազան ձևերով, բայց նա չէ կարողանում ոչնչացնել ամբողջովին մի ցեղ, որ չէ կամենում անհետանալ, որ տանջվում է ահռելիօրէն, բայց վերապրում է այնուամենայնիւ։ Նրա կարծիքով, կատարելու առաջին գործը՝ կրթութեան գործն է, ապա եւրոպական միջամտութիւնը կարող է բարուօքել ճնշվածների վիճակը։ Առայժմ ոչինչ սպասել չէ կարելի Ռուսաստանից։ Որքան որ այդ երկիրն ինքը ջարդված կը լինի ինքնակալական րեժիմով, նրա հեղինակութեան տարածումը Փոքր-Ասիայում նոյնքան վտանգաւոր կը լինի հայերի համար, որքան համիդիական լուծի շարունակութիւնը։ Բայց եթէ Դուման իր ձեռքը ձգէ իշխանութիւնը, այն ժամանակ փրկութիւնը կարող է գալ Ռուսաստանից։

Ուրեմն դոքտոր Րայնոլդ փրկութիւն հայերի համար սպասում է միայն ինքնակալական լծից ազատված Ռուսաստանից, իսկ մինչ այդ իբրև ազատագրական շարժման նոր ուղի գծում է կրթութեանը և եւրոպական կուլտուրայի տարածումը։ Այս վերջին կէտի վրա մանաւանդ նա հրաւիրում է ուշադրութիւն։

Յաջորդ անգամ մենք կը խօսենք թէ այդ կէտի և թէ Պիէր Քիյարի արտայայտած կարծիքի մասին, որ ընդունելով հանդերձ եւրօպական կուլտուրայի տարածման անհրաժեշտութիւնը՝ հայերի փրկութեան համար, այդ փրկութիւնը տեսնում է և մի այլ կարևոր հանգամանքի մէջ, թուրք և հայ ժողովուրդների համերաշխութեան և համագործակցութեան մէջ։

Հ. Առաքելեան.

ՎԵՐՋԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

Ռուսաց Հեռագրական Գործակալութեան հեռագրում են Կ. Պոլսից, որ հայոց պատրիարք Մաղաքիա արքեպիսկոպոս Օրմանեանը ներկայացրեց սուլթանին իր հրաժարականը պատրիարքական պաշտօնից, որովհետև իր միջնորդութիւնները և դիմումները իր հօտի ցաւերը դարմանելու համար մնում են առանց հետևանքի։ Սուլթանը պատասխանել է, որ թէև չէ կարող ընդունել պատրիարքի միջնորդութիւնները, բայց անձնական մեծ հաւատ ունենալով նրա վրա, հրաժարականը չէ ընդունում։

—

Հին-Նախիջևան, յունիսի 25-ին

Նախիջևանի գաւառի Նորս, Նորսմագրա և ուրիշ աղէտահար գիւղերի դրութիւնը ներկայումս սոսկալի է։ Ազգաբնակութիւնը սաստիկ կարօտութեան մէջ է։

Այս տարվայ բերքը վատ է։ Շատ տեղերում անկարելի է հնձել արտերը։

Ազգաբնակութեանը հարկաւոր է անյապաղ օգնութիւն։ Մինչև այժմ ուղարկված փողերը ծախսված են։ Հարկաւոր են նոր դրամական նպաստներ։

Լևոն վարդապետ

—

Շուշի, 22 յունիսի

Քաղաքի ջուրը կտրել են գաւալուեցիք և խալֆալուեցիք։ Ժողովուրդը պապակում է ծարաւից։ Գօլօշչապօվը կօզակներ ուղարկեց ջուրը բաց թողնելու, բայց թուրքերը հրացան արձակեցին և... կօզակները յետ փախան, առանց նպատակին հասնելու։ Ու մենք դարձեալ ծարաւ ենք։

Թուրքերը չեն դադարում «Սանգեարից»՝ քաղաք մտնող հայ ճանապարհորդների վրա՝ հրացան արձակել։

Ագդամից եկող մի վստահելի անձ, ակցիզնի չինովնիկ, պատմեց, որ թուրքերը սաստիկ գրգռված են և մտադիր են ուղղակի պատերազմ յայտարարել հայերին—կամ իսպառ ջնջել, կամ ջնջվել։ Այդ ստոյգ լուրը զեկուցեցին Գօլօշչապօվին։

Դեռ շատ գիժոտաբար են վարվում թուրքերը, կաւելացնենք մենք, աւելին կարելի է սպասել, քանի կառավարութիւնն այսպէս է....

Յունիսի 23-ին։

Հայկական շատ գիւղեր, որոնց արտերը գտնվում են թուրքական սահմաններին մօտ, չեն կարողանում հնձի գնալ և արտը թափվում է։ Դրանցից մի քանիսը խնդրեցին Գօլօշչապօվից զինուորական պահակներ դնելու սահմաններում մինչև կալկուտի վերջը, բայց չը ստացան։ Ինչո՞ւ քոչը զօրքով են ճանապարհում, իսկ հայ գիւղացուն մի քանի զինուոր չեն տալիս՝ իր հացն ապահով հաւաքելու....։

Երէկ մօլօքանների բազարը՝ Կարաբուլաղ գնացող երեք թաղավարդեցի հայերի վրա են յարձակվում ղաշքարեցի 7 զինված թուրքերի աւազակախումբ և իրանց ձիերով քշում գերի տանելու։ Հայերն իմանալով որ վերջը իրանց կոտորելու են՝ փորձում են փախչել, մտածելով—եթէ ազատվեն՝ լաւ, իսկ եթէ սպանվեն՝ խօ արդէն սպանվելու են։ Դրանցից մէկը սպանվում է փախչելու ժամանակ, իսկ երկուսն ազատվում են։

Դաշուշէնը՝ 30 տնից բաղկացած մի փոքրիկ գիւղ, որ խեղդված է Մալիբէկլուի և Շուշու թուրքական թաղի մէջ և անլուր հալածանքներ ու սպանութիւններ կրեց այս մի տարին, երէկ ենթարկվեց 500 ր. տուգանքի մի սարքած զրպարտութեան համար, որ իբր թէ՝ գիւղացիք հրացան են արձակել ճանապարհով անցնող թուրքերին։ Նրանք իրանց պահէին մեծ փառք է, քան վրէժխնդիր կարողանային լինել։

Այս րոպէին լուր հասաւ, որ այս գիշեր Աղդամում թուրքերը 3 կօզակ են սպանել։

—

Կարիագինօ, յունիսի 19-ին

Ամսի 20-ին չորս հայ երիտասարդներ գնում էին տուն, դէպի Խրմանդժուկ գիւղը, որը վաղուց թուրքերը կրակել էին և կողոպտել։ Հայերի վրա են յարձակվում և վիրաւորում մէկին, իսկ միւսները փախչում են։ Թուրքերը բոլոր զինված էին մօսինի հրացաններով։

Այս գիւղում բնակվում են մօլօկաններ։

—

Կարիագինօ, յունիսի 19-ին

Ամսի 21-ին, առաւօտեան ժամի 11-ին հաւար ընկաւ բազարում թէ 2 հայ Գուրուչա գիւղի ափին սպանել են երկու թուրքի։ Թուրքերը բոլորը զինված գնացին, բայց ոչ մէկ սպանված չը գտան։ Եթէ կօզակների հարիւրեակը այստեղ չը լինէր, վաղուց թուրքերը կոտորած կառաջացնէին։

Տ. Գ.

—

Տանակերտ, 19 յունիսի

Մեր հարևան դղնիսցիները, ինչպէս երևում է, մտադրութիւն չունեն հանգստանալու, չը նայելով մեր բոլոր ջանքերին խաղաղութիւնը չը խախտելու։ Վերջին ժամանակները նրանց զինված խմբերը շրջում են սարերում և ճանապարհներում։ Ամսիս 18-ին մեր հովիւներից մէկը, ցերեկվայ ժամի մօտ 12-ին, լուր բերեց, որ երևում են զինված դղնիսցիներ, որոնք, ըստ երևոյթին, փորձում են քշել նախիրը։ Բարեբախտաբար հէնց այդ ժամանակ մեզ մօտ էր Օրդուբադի տեղական զօրամասի հրամանատարը մի վզվօդ զինուորների հետ, որն իսկոյն հետամուտ եղաւ զինված թուրքերին և երկուսին ձերբակալեց իրանց զէնքերով։ Հրացանաձգութեան ժամանակ, ինչպէս ասում են իրանք թուրքերը, իրանցից վիրաւորված է մէկ հոգի։

Հայկ

—

Սուխում, 23 յունիսի

Այսօր, տեղական բանտում պահապան զինուորը Թադէոս Կայսրին՝ հայհոյելու համար սպանեց՝ կողոպտումների և սպանութիւնների մէջ մեղադրվող բանտարկեալ Գոգօշիանին։

(Հեռ. Գործ.)

—

Պետերբուրգ, 24 յունիսի

«Русское Слово»-ի յունիսի 17-ի համարում տպված է Թիֆլիսից խփած մի հեռագիր, որ ի նկատի ունենալով հայր Ֆորոդշեվի՝—տեղական հայրենա- [illegible]

(Հեռ. Գործ.)

—

Ալէքսանդրոպոլ, 23 յունիսի

Այսօր տեղական 39-րդ [illegible] ...ւորին ծանր կերպով վիրաւորում գլխից և էրծքից. վիրաւորին իսկոյն տանում են հիւանդանոց. բժիշկների ասելով չի ապրի։

Արամ Մամեանց

—

Նոր-Բայազէտ, յունիսի 24-ին

Տարուց աւելի է, որ տաւարի ժանտախտը գոյութիւն չունէր մեզանում, բայց մօտ օրերս անասնաբոյժները յայտնեցին, որ չորրորդ գաւառամասում արդէն նկատվում է ժանտախտ, և սպառնում է համաճարակի բնաւորութիւն ստանալ, եթէ բնակչութիւնը առաջվայ պէս անփոյթ վերաբերվի և չը պահպանէ կարանտինի կանոնները։

—

Նոր-Բայազէտ, յունիսի 24-ին

Ամսիս 22-ին, երեկոյեան դէմ կայծակի երկու ուժեղ հարուած տեղի ունեցան քաղաքիս մէջ։ Առաջինը Եզէկ Պետրոսեանի տան վառարանի ծխնելոյզից անցաւ միւս սենեակը և գետին տապալելով շեմքում կանգնած տանտիրոջը, թեթև վիրաւորեց նրա ձեռքը։ Երկրորդ աւելի ուժեղ հարուածն ընկաւ Բաւօ Մալաքեանի բակը, բայց անվնաս։ Հետևեալ օրը մի քանի րոպէ սաստիկ անձրև եկաւ, այնպէս որ փողոցներով անցնելը անհնարին դարձաւ։ Մի քանի վայրկեան եկող կարկուտը անվնաս անցաւ։

—

Եարօսլավ, 25 յունիսի. «Ռուս ժողովրդի դաշնակցութիւնը» մի հեռագիր է ուղարկել Պետական Դումայի նախագահին, հայցելով—միջնորդութիւն յարուցել Թադէոս Կայսրի առաջ՝ զինուորական դիկտատուրա մտցնելու։

(Հեռ. Գործ.)

ՊԱՇՏՕՆԱԿԱՆ

Թիֆլիսի գեներալ-նահանգապետի որոշումը.

Անհրաժեշտ համարելով տուգանքի ենթարկել յունիսի 22-ի գործադուլին մասնակցողներին, որի նպատակն էր անկարգութիւններ առաջ բերել քաղաքում, առաջարկում բոլոր առևտրա-արդիւնաբերական հաստատութիւններին, բացի մսագործներից, հացավաճառներից, հացի փուռներից և նրանցից, որոնք այդ օրը առևտուր արել են, երեք օրվայ ընթացքում, հաշվելով յայտարարութեան օրից, յանձնել գանձարանին ի դէպօզիտ Կովկասեան Փոխարքայի դիւանատան իրանց վրա դրած տուգանքները հետևեալ հաշւով։

I

Այն առևտրական ձեռնարկութիւնների համար, որոնք ունեն հետևեալ վկայականները.

1	կարգի	200 ր.
3	« »	50
2	« »	100
4	« »	15

II

Այն արդիւնաբերական ձեռնարկութիւնների համար, որոնք վճարում են հետևեալ վկայականներով.

1	կարգի	200 ր.
2	« »	100 «
3	« »	50 «
4	« »	25 «
5	« »	20 «
6	« »	10 «
7	« »	5 «
8	« »	5 «

Այն առևտրա-արդիւնաբերական ձեռնարկութիւնները, որոնք մինչև յունիսի 28-ը որոշած տուգանքը չեն յանձնիլ գանձարանին ու [illegible] այդ մասին ներկայացնիլ Թիֆլիսի ոստիկանական վարչութեանը, հերթով կը փակվեն որոշ ժամանակներով։

Գեներալ Տիմոֆէեվ։

23 յունիսի 1906 թ.

Թիֆլիս

Թիֆլիսի գեներալ-նահանգապետը հետևեալ հրամանները է արձակել Թիֆլիս քաղաքի ոստիկանապետի պաշտօնակատարին.

I

Անհրաժեշտ համարելով [illegible]

II

Անհրաժեշտ համարելով [illegible]

III

Անհրաժեշտ համարելով [illegible]

ծառայողներին յունիսի 22-ի քաղաքական գործադուլին մասնակցելու համար, առաջարկում եմ պահանջել էլէքտրաքարշի ընկերութեան դիրեկցիայից երեք օրվայ ընթացքում իւրաքանչիւր ծառայողի ամսեկան ռոճկի 20 %-ը և յիշեալ գումարները Կովկասեան Փոխարքայի դիւանատան դէպօզիտով մուծել գանձարան, առաջարկելով յիշեալ գումարը յետ պահել ծառայողների առաջիկայ ռոճիկը վճարելիս։

Գեներալ Տիմոֆէյեվ

ԱՊԵՐԱԽՏՈՒԹԻՒՆ

Հինոտը սպի մէջ է...

Դա մի փոքրիկ գիւղ է, 10—15 տնից բաղկացած, Շուշու Թուրքական մասի արեւելեան ճակատում, երկու վիթխարի քարաժայռի ծոցում։ Այդ գիւղացիք աւելի ջաղացպաններ են, քան գիւղականներ։—Դրանց բանն ու գործը ջաղացպանութիւն է։ Գրեթէ ամեն տուն մի ջաղաց ունի։ «Քարին տակ» գետի վրա են այդ ջաղացները, նրա շուրջն են և իրանց տները։

Տարին 12 ամիս նրանց բանն ու գործը քաղաքի Թուրքերի համար ալիւր աղալն է։ Հայերի հետ նրանք շատ քիչ գործ ունեն. տեղը ձախ է, անյարմար։

Իւրաքանչիւր շուշեցի Թուրք ճանաչում է հինոտեցուն, մեծին թէ փոքրին. գիտէ նրա անունը։ Իւրաքանչիւր հինոտեցի իր կեանքում մի քանի անգամ ամեն մի Թուրքի դռան ալիր բեռն է իջեցրել։

Նա ազատ մուտք ունէր Թուրքերի Թաղը նոյն իսկ արիւնոտ օրերում։ Հրամայել էին նրանց չը դիպչել, որովհետև իրանց համար հաց էին բերում, քաղցից ազատում։ Մի հինոտեցու մինչև անգամ անգիտակցաբար խփել, սպանել էին... Թուրքերը նրա արեան փողը հաւաքեցին ու տուին ընտանիքին ու ներողութիւն խնդրեցին։

Այդպէս չէր վերջերս։ Պատկերը փոխվել էր։ Մեր կարճամիտ հարեւանները մեծ քանակութեամբ պաշար էին ստացել Նուխից։ Յունվար—յունիս՝ վեց ամիս շարունակ Փոլզօնները նրանց համար ճռռ հա ճռռ ալիւր էին կրում։ Տներ, պահեստներ, խանութներ լիքն էին։ Նրանք այլ ևս կարիք չունէին հինոտեցուն փաղաքշել, կենդանի թողնել։

Յաւիտենական էին կարծում պաշարը, անսպառ...։

Հինոտեցին այդպէս չէր մտածում։ Նա համոզված էր, որ Թուրքը վերջիվերջոյ դարձեալ իր մուշտարին է լինելու, բարեկամը, ծանոթը, իսկ ինքը նրա ջաղացպանը։

Այդ հովերով տոգորված նա չէր երկմտում Թուրքի ապերախտութեան վրա։

Ելումուտքը ազատ էր։ Բայց... առաջին պղպջակը կատարվում է շատ բնական կերպով։

Քաղաքից գիւղ է վերադառնում մի պատանի՝ ձիու կապը բռնած։ Երկու Թուրք հետեւում են նրան։ Հրացանի ճռռոցը սարսափահար է անում պատանուն. վախից նա բաց է թողնում ձիու կապը և ճչալով դէպի գիւղ վազում։

Ձին ետեւից Թռցնում են Թուրքերը։

Գիւղացիք ըօպէ չեն կորցնում քաղաք գալու և գանգատվելու նրանց մեծին՝ Նաջաֆ-Գուլի-աղային։

—Ո՞վ կարող է համարձակվել, մեր ձին տանել և մեր տղայի վրա գնդակ արձակել։ Գնանք և խաղոյն կաղատենք ու կասենք, որ այսուհետև մեզ հետ լաւ վարվեն։ Եւ կը վարվեն, երախտիք ունենք։

—Գնանք...։

Վստահութիւնը նրանց մէջ կատարեալ է։

Ութ տղամարդ—գիւղացոց աչքը, եղած չեղած փափախաւոր, ոչխարի պէս վազում են դէպի քաղաք, դէպի Նաջաֆ-Գուլի-աղայի տունը, որ գտնվում է ծայրի վրա։ Դրանց բռնում են Թուրքերը։

—Ո՞ւր էք գնում, հարցնում են նրանց։

—Աղի տունը...

—Մենք էլ հէնց կը տանենք ձեզ այնտեղ։

Տանում են... Զէ, այս անգամ շատ միամիտ էին գիւղացիք։ Թուրքերի դէմքն ուրիշ գոյն ունէր։ Բանտարկեցին մինչև աղայի հրամանը։

Զայնը քաղաք ընկաւ։ Ժողովուրդը դէս ու դէն վազեց։ Գօլօշչապօվին գանգատվեցին. մէկ, երկու, հինգ, տասը, օրեր և օրեր ժամանակ տուին բերելու գերիներին։ Աղալարները երդումով հաւատացրին, որ իրանց մէջ գերի չը կայ. մինչև անգամ ամօթահար արին մեզ, թէ ինչպէս Թոյլ կը տային իրանց դիպչել հինոտեցուն։

Սակայն... դժբախտներին պայտեցին ոտ ու ձեռքը և աղաղակը երկինք բարձրացնելով քշեցին դէպի սպանդանոց, դէպի կառափնարան և ամեն մի դահիճ իր ուզածի պէս տանջեց նրանց, մորթեց, սպանեց, յօշոտեց... և հետքը մինչև այսօր էլ չը կայ։

Իսկ Գօլօշչապօվը շարունակ կրկնում է իր անվերջ երգը—такъ вѣрнѣе։

Տ.

ՇԱՐԺՈՒՄՆԵՐ

Բարձրագոյն հրամանով լէյբ-գվարդիայի Պրէօբրաժէնեան գնդի գնդապետ իշխան Տրուբեցկօյը, կապիտաններ՝ ֆլիգէլ-ադիւտանտ իշխան Օբօլենսկին, Մանսուրօվ, Միխայլօվ և Ստարիցկի, պօդպօրուչիկներ Ֆօն-Դէն և Եսաուլօվ, այդ բոլոր եօթ հոգին էլ փոխադրվում են մի առանձին հետեւակ բատալիօն միևնոյն աստիճաններով, իսկ իշխան Օբօլենսկին միևնոյն ժամանակ զրկվում է ֆլիգէլ-ադիւտանտի կոչումից։

—«Страна» լրագիրը հաղորդում է, որ յունիսի 16-ին Նովգորոդեան նահանգի Մէդվէդ գիւղը եկաւ նախկին լէյբ-գվարդիայի Պրէօբրաժէնեան գնդի առաջին բատալիօնը իր հրամանատարի՝ գնդապետ իշխան Տրուբեցկօյի և օֆիցերների հետ։ Բատալիօնը իջեւանեց զօրանոցներում։ Մօտ օրերս բատալիօնը ստանալու է նոր ձևի հագուստներ, տարբեր լէյբ-գվարդիայի Պրէօբրաժէնեան գնդից։ Զինուորների վրա խիստ հսկողութիւն է նշանակված։

—Պրէօբրաժէնեան գնդի առաջին բատալիօնը Պետերհօֆից հեռացնելուց յետոյ, լէյբ-գվարդիայի ուլաների գնդի գնդապետ գեներալ-մայոր Օրլօվը դիմեց իր ստորադրեալներին մի ճառով, որով շնորհակալութիւն էր յայտնում նրանց պրէօբրաժենցիների խռովութիւնների ժամանակ ցոյց տուած հաստատակամութեան ու յայտնած պատրաստակամութեան համար ամենավճռական կերպով ճնշել խռովարարներին։ «Рѣчь»

—«Наша Жизнь» լրագիրը հաղորդում է, որ յունիսի 14-ին I սապեօրների բրիգադայի բանակատեղում լէյբ-գվարդիայի սապեօրների բատալիօնի 5 րդ վաշտի գլխաւոր կապիտան Զարօտկինը, հաւաքելով իր վաշտը և կարդալով զինուորների մօտ Պրէօբրաժէնեան գնդի I բատալիօնի յայտնի պահանջները, բղաւելով հարցրեց. «Դէհ, որը կը հաստատէ ձեզանից, որ այդ բոլոր գրածները ճշմարիտ են»։ Շարքերից դուրս եկաւ զինուորական հեռագրական վաշտի մի ունտեր-օֆիցեր Շիվկօվլեւս ազգանունով և անվրդով կերպով ասաց. «Այո, այդտեղ գրածները բոլորն էլ ճշմարիտ են, և այժմ Ռուսաստանի բոլոր զինուորներն էլ գիտեն դրա մասին»։ Կատաղած օֆիցերը յարձակվեց զինուորի վրա հայհոյական բառերով, և իսկոյն էլ վազեց զեկուցանելու այդ մասին զինուորական իշխանութեանը Շիվկօվլեւսին կալանաւորելու համար, բայց զինուորները թոյլ չը տուին կալանաւորելու նրան և երեկոյեան ստուգութիւնից յետոյ ժամի 9½-ին մեծ քանակութեամբ ժողովվեցին բոլորովին ազատ կերպով բանակատեղի տափարակում և քննեցին օֆիցեր Զարօտկինի կողմից զինուոր Շիվկօվլեւսին վիրաւորելու հարցը։ Միտինգում բացառապէս ճառեր էին խօսում զինուորները։ Իրանց ընկերի հաւանական կալանաւորութեան առիթով վճռեցին յամենայն դէպս Թոյլ չը տալ, որ մի այդպիսի բռնութիւն տեղի ունենայ։ Ի Թիւս ուրիշ հարցերի, որոշում կայացրին ապագայում միտինգներ կազմել բացարձակ կերպով, այլ ոչ թէ Թաքնվել Թփերի մէջ, ինչպէս որ այդ անում էին առաջ։ Միտինգը անցաւ միանգամայն խաղաղ ու կարգապահութեամբ։ Վերջում մի ճառախօսի առաջարկութեամբ Պրէօբրաժենցիներին ողջոյն արտայայտվեց որոտընդոստ «ուռաներով»։

—«Русск. Вѣд.» լրագրին Օդէսսայից գրում են որ, տեղական զինուորների միտինգը մի նակազ է ուղարկել Պետական Դումային, որի մէջ պահանջ են յայտնում, որ Դուման պէտք է ուղարկէ իր ներկայացուցիչներին զօրքի բոլոր մասերը տեղն ու տեղը քննելու զինուորների անտանելի ողորմելի և իրաւազուրկ վիճակը։ Իրանց նակազով, դիմելով աշխատաւոր բանուոր խմբակներին, զինուորները խոստանում են լիակատար պաշտպանութիւն ցոյց տալ ամբողջ Դումային իր բոլոր ճշմարիտ ռամկավարական պաշտօնի համար։

—«Страна» լրագիրը հաղորդում է, որ յունիսի 16-ին տասնեակ Պետերբուրգի հրդեհաշէջների մէջ լուր տարածվեց Րօժդեստվէնսկի քաղաքամասի հրդեհաշէջների սկսած գործադուլի մասին։ Այդ լուրը մասամբ հիմնաւոր էր։ Րօժդեստվենսկի քաղաքամասի հրդեհաշէջների ամբողջ կազմը, երբ հաւաքված էին բրանդմայօրի հրամանով, պահանջեց հեռացնել իրանց միջից բրանդմէյստէրների երկու օգնականներին, որոնց նրանք լրտեսներ են համարում և որոնց հետ նրանք շարունակել իրանց ծառայութիւնը չեն կարող։ Հրդեհաշէջների պահանջները դրդեցին բրանդմայօրին անձամբ միջոցներ ձեռք առնել նրանց հանգստացնելու. Իր կողմից բրանդմէյստէրի օգնական Լէվինն էլ դիմեց գանգատով ժանդարմների գնդապետ Պրէֆէրանսկուն, որը ստիպված էր կալանաւորել Լէվինին արձակելու համար յայտարարված պահանջների գլխաւոր հեղինակներին 5 կամ 6 հոգի։ Դրա մասին տրված գանգատը այն աստիճանի վրդովեցրեց հրդեհաշէջներին, որ նրանք բանակցութեան մէջ մտան միւս քաղաքամասերի ընկերների հետ և կազմեցին հետեւեալ բանաձևը. 1) Նրանցից որևէ մէկին հեռացնելու դէպքում միւս քաղաքամասերը հրաժարվում են դուրս գալ հրդեհներ հանգցնելու. 2) Այն դէպքում, եթէ Լէվինը երկու օրվայ ընթացքում չի թողնի ծառայութիւնը, այն ժամանակ նրան դուրս կը հանեն բռնութեամբ, տաչկի վրա դրած։

—Պետական Դումայի նախագահ Մուրօմցեվը յունիսի 17-ին մի շատ վրդովեցուցիչ հեռագիր է ստացել Տուլայի նահանգի Եպիֆանովսկի գաւառից, որին ստորագրել են քահանաները, կալուածատէրերը և վօլօստնոյ ստարշինաները, որով հաղորդում են այնտեղ սկսված լուրջ անկարգութիւնների մասին, որոնք սպառնում են ընդարձակ չափեր ստանալ։ Պատճառը նրանք համարում են մինիստրական դեկլարացիան։ Այդ դրութիւնից ազատվելու միակ ելքը նրանք համարում են մինիստրութեան հրաժարականը։

—Պետերբուրգում հետզհետէ աւելի է սաստկանում կօշկակարների գործադուլը։ Գործադուլը առ այժմ բռնել է այն արհեստանոցները, որտեղ անկանոնութիւնները չափազանց են։ Բացի արհեստանոցի առողջապահական պայմանների և սնունդի բարելաւումից, պահանջներ են անում և օրավարձը աւելացնելու մասին։

ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ ԳԱՒԱՌԻՑ

Դերբենդ, յունիսի 22-ին։ Ալան-Թալանի ովկիանոս է դարձել Դերբենդը իր շրջակայ գիւղերով։ Գիւղերից ոչ վաճառական, ոչ գիւղացի բանուոր սիրտ չեն անում քաղաք գալ, վախենալով որ կընկնեն աւազակների ձեռքը. Նոյնպէս և քաղաքի վաճառականները չեն համարձակվում գիւղերը գնալ ապրանքներ ժողովելու. մինչև անգամ այգետէրերը չեն համարձակվում այգիներ գնալու։ Օր չէ անցնում, որ չը լսենք թէ այս գիւղում աւազակները սպանեցին խեղճ գիւղացիներին, կամ թէ բռնեցին ու ստանալով յայտնի գումար՝ բաց թողին։ Մի քանի օր առաջ Դերբենդի մօտակայ Ն... գիւղում բռնել են երկու հրէայի. մէկից պահանջում են 10,000 ր. փրկանք, իսկ միւսից 3000 ր.։ Գիւղացի ու տասնեակ հազար։ Յունիսի 16-ին քաղաքից 1½ վերստ հեռաւորութեան վրա «բաղամլըղ» կոչված տեղում, սպանեց ժամը 6-ին երեկոյեան Աբդուլջլիլ անունով աւազակը, որը առաջ երկու տարուց ի վեր փախուստ տալով կառավարութիւնից մարդասպանութեան պատճառով, աւազակութեամբ էր պարապում այգիներում ու մօտակայ գիւղերում։ Դէպքը պատահում է այսպէս. աւազակ Աբդուլջլիլը գալով Օր..... այգին՝ ստիպում է այգեպանին (լեզգի) տանել երկու Թիթի կօտրներ, մէկը պ. Օր.... իսկ միւսը հրէայ Ի.... (այգետէր) անունով, որով ամեն մէկից պահանջում է 600 ր.։ Խեղճ այգեպանը անմիջապէս կատարում է աւազակի հրամանը, վերցնում է Թղթերը, ասելով թէ կը տանեմ ու կը յանձնեմ, բայց քաջ աւազակը ստիպում է, որ անմիջապէս հիմա տանէ, եթէ ոչ առւօտը ինքը պիտի լինի։ Երկար ձգձգելուց յետոյ այգեպանը ստիպում է, որ իր հետ գայ քաղաք ու յանձնէ ըստ պատկանելոյն։ Հազիւ վեց վերստ գալուց յետոյ, այգեպանը մի քանի քայլ յետ է մնում աւազակից, ու յարմար րօպէ գտնելով հրացանի մի հարուածով տեղն ու տեղը գլորում է աւազակին ու անմիջապէս ներկայանում է ոստիկանութեան և պատմում եղելութիւնը. իսկ ոստիկանապետը, կատարելով իր պարտականութիւնը, անմիջապէս բանտ է նետում նրան, կազմելով «պրօտօկօլ»։ Ի՞նչ են մտածում մեր այգետէրերը, ինչու միջոցներ ձեռք չեն առնում ազատելու բանտից անմեղ բանտարկեալին, կարծեմ ժամանակ է սթափվելու... Խեղճ մարդիկ ստանալով այգետէրերից ամսական չնչին 10—12 ր., պարտաւոր են նայել թէ այգիների և թէ պաշտպանել ազա այգետէրերի պատիւը... Դեռ չէի վերջացրել նամակս, երբ տեսայ որ կօզակները սայլի մէջ դրած բերին մաշխլեցի Թէմիր-բէգ աւազակին վիրաւորված, որ ահա երրորդ տարին է ինչ աւազակութիւն է անում, պատսպարվելով անտառներում։ Քիչ ահ ու սարսափ չէր գցել այդ երիտասարդ աւազակը ամբողջ Ղայթաղ-Թաբասարանի շրջակայքի վրա։ Այդ կարճ ժամանակամիջոցում նա երեք անգամ էլ բանտից փախել է. տեսնենք թէ այս անգամ ինչով կը վերջանայ սկսված դրաման։

Դարդիման

ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ԺՈՂՈՎԸ

Կիբակի, յունիսի 25-ին, դումայի դահլիճում կայացաւ Հայոց Բարեգործական Ընկերութեան ընդհանուր ժողովի շարունակութիւնը, մասնակցութեամբ մօտ 35 անդամների և նախագահութեամբ բժշկապետ Բ. Նաւասարդեանի։

Ժողովը զբաղվեց Ընկերութեան վարչութեան, Աւագաշեան որբանոցի և էժանագին ու ձրի ճաշարանի նախահաշիւների հարցով 1906 թւի համար։

Ընկերութեան նախահաշիւը կազմված էր 7600 ր. 10 կ. գումարից, որի մէջ և ճաշարանի նախահաշիւը։ Աւագաշեան կտակի նախահաշիւը կազմված էր 6845 ր. 97 կ. գումարից, որից 1265 ր. զանազան ծախսերի, ըստ կտակի, իսկ մնացածը որբանոցի ծախսերի։

Ժողովի սկզբում վարչութեան նախագահ պ. Տ. Յովհաննիսեան մի երկար բացատրութիւն կարդաց վարչութեան 1905 թ. ունեցած գործունէութեան մասին։ Այդ բացատրութեամբ ժողովականների համար շատ թիւրիմացութիւններ և տարակուսանքներ փարատվեցին։

Ժողովը հաստատեց նախահաշիւը մի քանի փոփոխութիւններով, որոնցից որբերի համար բանալ առանձին դպրոց, իսկ թէ ինչ տիպի դպրոց, այդ հարցի մշակումը յանձնվեց մի առանձին մասնաժողովի։ Ժողովը մերժեց վարչութեան առաջարկը՝ կրճատել որբանոցի աւագ կառավարչուհու ռոճիկը 120 րուբլիով և որոշեց թողնել նրա ռոճիկը (600 ր.) անփոփոխ, բացի դրանից վարձել մի երկրորդ օգնականուհի։

Այս անգամ դարձեալ ընտրութիւններ չը կայացան։ Ժողովը որոշեց ընտրութիւնները կատարել սեպտեմբերին, իսկ մինչև այդ խնդրել ներկայ վարչութեան շարունակել իր պաշտօնը։

ՈՒՐՈՒՍՈՎԻ ՄԵՐԿԱՑՈՒՄՆԵՐԻ ՏՊԱՒՈՐՈՒԹԻՒՆԸ ԵՒՐՈՊԱՅՈՒՄ

«Մշակ»-ի անցեալ համարներից մէկում խոստացել էինք ընթերցողներին ծանօթացնել կոմս Ուրուսովի նշանաւոր ճառի ազդեցութեան հետ Եւրոպայում։ Ինչպէս և պէտք էր սպասել, այդ ճառը մի կատարեալ սենսացիա է առաջացրել եւրոպական բոլոր երկրներում և բոլոր շրջաններում։ Ուրիշ կերպ, իսկապէս, չէր էլ կարող լինել, որովհետև եւրոպացիները որչափ էլ վատ կարծիք ունենային մեր բիւրօկրատիայի մասին, որչափ էլ սրան համարէին բոլոր պօգրօմների ու ամեն տեսակ խայտառակութիւնների հեղինակ, այնուամենայնիւ նրանք չէին կարող երևակայել անգամ այն բոլորը, ինչ որ մերկացրեց նախկին մինիստր Ուրուսովը և որ կողմնակի կերպով, ակամայից, հաստատեց ներկայ մինիստրութեան անդամ Ստիշինսկին։

Եւրոպացիները չէին կարող երևակայել՝ նրանք չեն կարողանում ըմբռնել անգամ, թէ մի երկրում կարող է երկու տեսակ կառավարութիւն լինել՝ մէկը յայտնի, ամենքից ճանաչված ու ամեն մի գործի համար պատասխանատու համարվող, բայց և միևնոյն ժամանակ լոկ անուանական, շատ գործերից նոյն իսկ անտեղեակ, ուրեմն և անզօր, պատասխանատու հանդիսանալու համար, իսկ միւսը գաղտնի, մութ անկիւններում Թագնված, ամեն տեսակ գործ տնօրինող ու կարգադրող, բայց և ամեն բանի համար անպատասխանատու մնացող։ Այս երկրորդ կառավարութեան գործողութիւնները, կոմս Ուրուսովի պատմելով, նրա անլեգալ տպարանի գաղտնիքը այնպիսի խստութեամբ էին պահպանվում և այնքան կոնսպիրատիւ էին, որ նրանց մասին ոչ միայն մինիստրութեան մէջ, այլ և ոստիկանական դեպարտամենտում շատ քչերը տեղեկութիւն ունէին։ Եւ այդ ստորերկրայ մութ ույժերը ցինիկաբար ասում են՝ «ինչ տեսակ պօգրօմներ կամենաք, կարող ենք կազմակերպել. կուզէք 10 մարդու, կուզէք 10 հազար մարդու»։

Եւ այս բոլորից յետոյ ինչպէս կարող էր չը ցնցվել ու սարսուռ չը զգալ ամբողջ Եւրոպան։

«Ուրուսովի ճառը,—ասում է ֆրանսիական «Temps»-ը,—մի կատարեալ դատավճիռ է Ռուսաստանի ադմինիստրացիայի մէջ Թագաւորող խայտառակ անիրաւութեան դէմ, որի ագենտները իրանց բիւրօներում լաբորատօրիաներ են սարքում կոտորածներ պատրաստելու համար և արքունական տպարաններում կոչեր են հրատարակում, սպանութիւնների հրաւիրելու համար։ Այն, ինչ որ ասաց Ուրուսովը, կատարեալ ճշմարտութիւն է։ Եւրոպայում չը կայ աւելի անիշխանական րեժիմ, քան ռուսական ինքնակալութիւնը։ Այն, ինչ որ այժմ հրապարակավ յայտարարում է Դուման, արդէն մի քանի տարի է, ինչ յայտնի է ամբողջ աշխարհին։ Եւ ոչ Թագը, ոչ մինիստրները ոչինչ չարեցին այդ չարիքը վերացնելու համար։ Ի՞նչ առաւելութիւններ այժմ նրանք կարող են բերել, իշխանութիւնը պարլամենտական կօնտրօլից զերծ պահելու համար, քանի որ այդ իշխանութիւնը իրանց ձեռքերից էլ դուրս է սպրդել արդէն։ Ի՞նչպէս կարող են նրանք յարգանք պահանջել դէպի իրանց քանի որ չը կարողացան հէնց իրանց ստորադրեալներին խոնարհութիւն ներշնչել»։

Ուրուսովի ճառի տպաւորութիւնը շատ խիստ եղաւ և անգլիական շրջաններում։ «Daily News» Թերթը այդ ճառի առիթով մի յօդուած տպագրեց «Դէպի Նիագարա» վերնագրով, որի մէջ ասվում է, թէ ռուսաց կառավարութիւնը ամբողջ ույժով հրում է երկիրը յեղափոխութեան ճանապարհի վրա։

«Բելօստօկի սարսափները,—ասված է այդ յօդուածում,—ոչնչով չեն տարբերվում Բուլղարիայում ու Մակեդոնիայում կատարված թրքական գազանութիւններից։ Դրանք լոյս են սփռում Ռուսաստանի կառավարութեան գործունէութեան եղանակների վրա, այն Ռուսաստանի, որը մինչև օրս դեռ քաղաքակրթված ազգերի շարքումն է տեղ բռնում։ Անգլիան և Եւրոպան չեն կարող հանդարտ սրտով այդ կարգի գործերի վրա նայել։ Անգլիական ժողովրդի ամբողջ համակրութիւնը Դումայի կողմն է, ազատութեան բարեկամների և այն ժողովրդի կողմն է, որը պօգրօմների և սպանութիւնների քաղաքականութեամբ խեղդելու յուսահատութեան է հասցրված։ Ցանկալի է, որ բրիտանական կառավարութիւնը մի հնար գտնէր մեր նաւատորմիղը Կրօնշտադ ուղարկելը յետաձգելու համար, որպէսզի մեր անհամակրութիւնը այդպիսով արտայայտած լինենք դէպի ռուսական կառավարական սիստեմը»։

Անգլիական «Tribune» Թերթը աւելի հեռուն է գնում և խորհուրդ է տալիս իրանց կառավարութեանը դիպլօմատիական միջամտութիւն անել։

«Ճիշտ է,—ասում է այդ Թերթը,—եղել են դէպքեր, երբ օտար երկրի միջամտութիւնը աւելի վնասակար է եղել, ամբողջ ժողովրդի գայրոյթը գրգռելով միջամտող պետութեան դէմ, որովհետև միջամտութիւնը վիրաւորել է ժողովրդի հայրենասիրական զգացմունքը։ Բայց անկասկած է, որ եղել են և դրա բոլորովին հակառակ դէպքեր։ Անգլիայի ցոյց տված համակրութիւնը Գարիբալդիին ու Կօշուտին միմիայն բուռն երախտագիտութեան զգացմունք առաջացրեցին իտալական և հունգարական ժողովուրդների մէջ։ Զարթած Ռուսաստանը աշխատում է խզել արեւելեան աւանդութիւնների կապերը և Արևմուտքին է դառնում, փնտռելով այնտեղ և հետևելու օրինակներ, և եռանդ կռվելու համար։ Ժողովուրդը Ռուսաստանում չափազանց համբերատու է. նա կռւում է միայն մի խումբ չինօվնիկների դէմ, որոնց ույժը բացառապէս կայանում է Թագի, զօրքի և դիպլօմատիայի վրա իշխանութիւն ունենալու մէջ։ Բարոյական տեսակէտից այդ մի խումբ մարդիկը նոյնչափ օտար են երկրին, ինչպէս և օտար էր աւստրիական բիւրօկրատիան ապստամբ Իտալիայի և Հունգարիայի համար։ Դումայում եղած վերջին վիճաբանութիւնները պարզ կերպով ցոյց տուեցին, թէ ո՛վ է ժողովրդի Թշնամին։ Վերջին պօգրօմները կազմակերպված էին իշխանաւորների ձեռքով, վարձու խուլիգանների մասնակցութեամբ, տեղական իշխանաւորների համբերատար հովանու տակ և անհամեմատ աւելի բարձրաստիճան պաշտօնէութիւնների անմիջական ազդեցութեամբ։ Այդ խմբակը Թագաւորից և կառավարութիւնից էլ աւելի ույժեղ է. առաջինը նրա ձեռքում խաղալիք է, իսկ երկրորդը նրա ձագուկն է։ Այդ խմբակը, որը դեռ շարունակում է Ռուսաստանը կառավարել, նոյն մարդիկն են, որոնք Եապօնիայի հետ պատերազմ առաջացրին և որոնք, քիչ էր մնացել, Ռուսաստանը Մեծ Բրիտանիայի հետ էլ պատերազմի մէջ գցէին, Հիւսիսային ծովում պատահած ինցիդենտի պատճառով։ Մեր բանկիրները ֆրանսիական և աւստրիական բանկիրների հետ այդ խմբակի գոյութիւնը պահպանեցին, նրան փող տալով։ Միթէ այժմ կառավարութիւնը նրա բարոյական վարկը կը պահպանի, նրա հետ համերաշխութեան բանակցութիւնների հետ մտնելով, նրա պատւին ծովային ցոյցեր սարքելով։ Մեր նաւատորմիղը չը պէտք է ուղարկվի Կրօնշտադ, քանի որ Ռուսաստանում ներկայ կամ նրա նման մի այլ մինիստրութիւն կը կառավարի։ Մենք իր ժամանակին մեր դիպլօմատիական յարաբերութիւնները կտրեցինք Սերբիայի հետ, որովհետև Թագաւորը իրան մօտեցրեց իր նախորդի սպանողներին։ Տրեպովի ոճրագործութիւնից աւելի ծանր են, նրա դրութիւնն էլ նոյնն է, ինչ նրանց դրութիւնը»։

Ռ.

ՎԵՐՋԱՊԷ՛Ս ԳՏԱՒ ՃԱՆԱՊԱՐՀԸ

Մեր բարեկամ պ. Աղայեվը վերջապէս գտաւ ճանապարհը։ Գտաւ՝ երկար ու յամառ խարխափումներից յետոյ։

Ահագին Ամերիկան գտնելու համար Կօլումբոսը գուցէ այնքան անձկութիւնների, այնքան դժուարութիւնների չը մատնվեց, որքան պ. Աղայեվը՝ այն պարզ, յստակ ուղին, որը մատնացոյց արել էինք մենք, որը մատնացոյց արել էին ու անում էին ամենքը։

Ահմէդ բէկ փրկարար ճանապարհը գտաւ շնորհիւ իշխան Ուրուսովի։

Փառք տանք, ուրեմն, այդ իշխանին, որ կռնակի վրա բացված դռները խորտակելով ներս մտցրեց ոչ միայն այն բազմաթիւ, անզուգական բիւրօկրատներին, որոնք աչք ունէին չը տեսնելու համար, ականջ ունէին չը լսելու համար, այլ և մեր պ. Աղայեվին։

«Իրշադ»-ի խմբագիրը՝ երջանկայիշատակ մինիստր Դուրնօվոյի օգնական և այժմ Պետական Դումայի անդամ իշխան ճառի ազդեցութեան տակ, իր լրագրի յունիսի 16-ի համարում զետեղել է մի առաջնորդող՝ «Լսեցէք, Մահմեդականներ և Հայեր» յուզիչ վերնագրով։

Լսենք, ինչ է ասում մեր պաշտօնակիցը։

Ո՞վքեր են ժողովուրդները միմեանց ընդհարելով այսքան արիւն Թափողները, այսքան երկիրներ ու քաղաքներ աւերակ դարձնողները, այսքան աչքեր արտասուքով լցնողները, այսքան զաւակների որբացողները»։

Այսօր Պետերբուրգի լրագիրները ստացվեցին և բերին մեզ Պետական Դումայում իշխան Ուրուսովի արտասանած ճառի մանրամասնութիւնները։ Այդ մանրամասնութիւնները տալիս են բաւարար պատասխան վերոյիշեալ հարցերին։

Եւ իր ընթերցողներին ծանօթացնելուց յետոյ իշխան Ուրուսովի, նրա բարձր դիրքը և նրա ճառի էական մասերը, աւելացնում է.

Այժմ անցնենք մեր սեփական ցաւերին։ Մեր՝ Կովկասի զաւակներիս այսօրվայ գլխաւոր ցաւը հայ-Թուրքական ջարդն է։

Ես էլ այս երկու տարվայ ընթացքում շարունակվող այդ ջարդերից զարմանում էի։ Եւ որքան որ էլ փնտռում էի այդ ջարդերի խնդրի մօտ պատճառը, բայց չէի գտնում։

Ես զարմանում էի, ապշում, որ դարերով որպէս հարեւան, բարեկամ, քիրվա ապրող և մի հայրենիքի զաւակ այդ երկու ժողովուրդները մինչև այսքան մեծ, անվերջ ատելութիւն ընկան։ Եւ որքան աշխատում էի, մտածում, չէի կարողանում գլուխ ընկնել։

Ներքին գործերի նախկին մինիստրի օգնական և այժմ Պետական Դումայի անդամ իշխան Ուրուսովի այդ ճառից յետոյ ամեն ինչ պարզ է ինձ համար։ Իշխանի ճառը կարդալիս՝ նախ քան կոտորածները տեղի ունեցած եղելութիւնները մի առ մի մօքիս առաջ պատկերացան։ Կարծես իշխանը այս դժբաղդ, արիւնի և կրակի մատնված Կովկասում ապրած լինի, կարծես մեզ հետ նոյն դէպքերին ականատես եղած լինի։

Ո՜վ կովկասցիներ! Ո՜վ մահմեդականներ և հայեր։ Միթէ սրանից յետոյ էլ պիտի շարունակէք ձեր խեղդակութիւնն ու յանցանքը։ Միթէ սրանից յետոյ էլ ձեր ձեռքերով ձեր տները քանդելով Պօբէդօնոսցևի և Տրէպովի նման մարդկութեան և մանաւանդ մեզ՝ ոչ-ռուս ազգերիս Թշնամի անձերի նպատակներին և դիտաւորութիւններին պիտի ծառայէք։

Մտածեցէք այն՝ որ մահմեդական և հայ իւրաքանչիւր նահանգ աւերվելիս՝ այդ Պօբէդօնոսցևները և Տրեպօվները հրճւում են, ծափահարում և ասում.

«Ո՜ն դօչադներ. ջարդեցէք, սպանեցէք, հրդեհեցէք. գուցէ զբաղվում թէ դուք ոչնչանաք և թէ Ռուսաստանի համար ազատութեան ճանապարհը փակէք!!»

Միթէ վայել է, որ սրանից յետոյ մենք այդ տեսակ չարամիտ, չէլթանիկերպ մարդկանց ձեռքում խաղալիք ու գործիք դառնանք։

Եթէ մինչև այժմ մենք մեր խելքը կորցրել և աչքերը կուրացրել էինք, այսուհետև իշխան Ուրուսովի յայտնութիւններից յետոյ խելաբերվելով չուրախացնենք մեր ազգային և կրօնական Թշնամիներին։ Զարթնեցէք ո՛վ Կովկասի զաւակներ, հայեր և մահմեդականներ!»

Պ. Աղայեվը խելօք մարդու յատկութիւն ունի։ Բայց, ինչպէս ամեն «խելօքութեան» յատկութիւն ունեցող մարդ, նա գործում է հասարակ ողջամտութեան, տարրական տրամաբանութեան դէմ աղաղակող սխալներ։

Մի գեղեցիկ օր, նա «Իրշադը» յայտարարեց սօցիալ-դեմօկրատական օրգան։

Իրան «սօցիալ-դեմօկրատ» հռչակած պ. Աղայեվը չը քաշվեց Թուրք ազնուականութեան տալու Թուրք գիւղացիութեան սրտացաւ բարեկամի, հեղինակաւոր պաշտպանի, արժանաւոր ղեկավարի պատուանունը։

Նա, որ պէտք է ճնշվողին կանգնեցնէր ճնշողի դէմ սպառնազէն, մի անօրինակ անգիտակցութեամբ ճնշողի ճիրանները աւելի խոր խրում էր ճնշվողի ծոծրակի մէջ։

Մի ուրիշ պատմութիւն։

Հայ-Թուրքական զարհուրելի ողբերգութեան յաւերժացումը տեսնելով՝ որ և է մարդ, առանց «խելօք» լինելու յատկութիւնը ունենալու, չէր կարող ինքն իրան հարց չը տալ.

—Վերջապէս, ինչ բան է սա. ենթադրենք, որ առաջին ընդհարման, երկրորդ, երրորդ ընդհարման դէպքերը տեղի ունեցան ինքնաբերաբար, հայերի և Թուրքերի անհաշտ ատելութեան, ոխերիմ Թշնամութեան պոռթկումի հետևանքով։ Բայց հօ այս օրհնված երկրում կայ իշխանութիւն, որը ժողովրդից փող է ստանում որոշ պարտքեր կատարելու համար։ Եթէ հայն ու Թուրքը իսկապէս դարձել են գազան՝ նրա պարտականութիւնն է զսպել, վանդակի մէջ դնել նրանց։ Բայց իշխանութիւնը, մի իշխանութիւն, որը գիտենք թէ ինչ քնքշութեամբ վարվում է ժողովրդի հետ,—մեռած է ձեւանում։ Նա ոչ միայն չէ զսպում երկու դժբաղդացած ազգերի անհանգիստ ու վտանգաւոր տարրերին, այլ յաճախ գրգռում է, գրգռում, իւղ ածում բռնկված կիրքերի վրա։

Ուրեմն։ Առանց խելօքութեան առանձին յատկութիւնների, պէտք էր ասել։

—Մեղաւոր է կառավարութիւնը։

Ինչ որ ասացին հայերը։ Ասացին իշխանութեան պաշտօնական ներկայացուցիչների առաջ։

Թուրք պատգամաւորները, որոնց շարքում պ. Աղայեվ, վրդովված, զայրացած՝ բացականչեցին։

—Մեղաւո՜ր, կառավարութի՞ւնը. ամենևին. իշխանութիւնները կարապից աւելի սպիտակ են, գառնուկից աւելի անմեղ... Մենք՝ Թուրքերս՝ ինչ որ անում ենք, գիտակցութեամբ ենք անում... Մենք պէտք է խելքի բերենք ամբարտաւան հայերին խփելով նրանց... քակին։

Սրանից յետոյ ինչ կարելի էր ասել։

Մենք՝ իջնելով մեր հոգու խորքը, ոչինչ չէինք գտնում յարձակողական՝ Թուրք ժողովրդի համար։ Մենք շատ լաւ գիտէինք, շատ լաւ տեսնում էինք, որ նա տառապում էր, և նրա տառապանքը մեզ յուզում, մեզ վրդովում էր մանաւանդ նրա համար, որ անխօսուն էր, նրա համար, որ նա չունէր ճշմարիտ պաշտպան։ Եւ այդ անլեզու, անբարբառ մասսան, երբ իր անհնարին տանջանքների մէջ ընդդիմադրաբար ձգտում էր մի ելք գտնել իր նահատակութեան, նրա անսիրտ ղեկավարները շղթայում էին դուռը։

—Դու տառապում ես, բայց միթէ չը գիտես թէ ո՛վ է քո դահիճը. հայը։

Եւ նա, այդ խեղճ, անլեզու ու մոլորված մասսան, իր ցաւի ամբողջ Թափով ընկնում էր հայի վրա, ինչպէս փրկութեան միակ միջոցի վրա, և ընկնում էր գլխաւորապէս այն հայի վրա, որը իր տառապանքի ընկերն է, իր նահատակութեան եղբայրը։

Մենք աւելի կարեկցութեամբ լցված՝ քան ատելութեամբ դէպի Թուրք մասսան, որի անգիտակցութիւնն ու դժբաղդութիւնը, մանաւանդ պատմական այսպիսի մի ահեղ րօպէում, արիւնոտում էր մեր սիրտը, մենք շարունակում էինք շիկացած երկաթը քսել անխնայ ու անգութ բիւրօկրատիայի ճակատին, որը իր անգործութեամբ և պրովոկացիայով քանդում, բնաջնջում էր երկու ժողովուրդներին։

Բայց ահա պ. Աղայեվը՝ լուսաւորված՝ իշխան Ուրուսովի օր ցերեկով մատն ածած լապտերի նշոյլներից, հրաւիրում է մեզ տեսնել դաւը, գլուխ ընկնել։ Մենք վաղուց է ինչ գլուխ էինք ընկել և սրտատրոփ անձկութեամբ սպասում էինք, թէ երբ, վերջապէս, դուք էլ պիտի ընկնէիք։

Մենք անչափ ուրախ ենք, որ վերջապէս գտաք ճանապարհը։

Տ. Զ.

ՈՒՍՈՒՑՉԱԿԱՆ ՀԱՄԱԺՈՂՈՎ

Ժ. նիստ

Ուսուցչական համաժողովի Ժ նիստը տեղի ունեցաւ յունիսի 25-ին, նախագահութեամբ պ. Ի. Յարութիւնեանի։

Կարդացվում և վաւերացվում են համաժողովի նախորդ նիստերի արձանագրութիւնները, որից յետոյ համաժողովը անցնում են իր իսկական զբաղմունքին։

Վիճաբանութիւնները սկսվում են այն հարցի շուրջը, որ ռուսահայոց դպրոցների ուսուցիչների և ուսուցչուհիների պրոֆեսիոնալ միութիւնը պէտք է ունենայ մի կենդրոնական խորհուրդ, որ գաւառներում ճիւղեր կունենայ, որոնք նպատակայարմար և սերտ յարաբերութիւն կունենան իրար հետ։

Առաջ եկաւ կենդրոնացման և ապակենդրոնական խնդիրը միութեան նպատակայարմար գործունէութեան վերաբերմամբ։ Ժողովականների մեծ մասը ապակենդրոնացման սկզբունքի կողմնակից լինելով, որոշեց ընդունել այդ սկզբունքը, որով միութեան գաւառական ճիւղերը իրաւունք են ստանում աւտոնոմ կերպով կառավարելու իրանց վարչական և ներքին բոլոր գործերը ռուսահայոց ուսուցչական պրոֆեսիոնալ միութեան մշակած և բոլոր ճիւղերի համար պարտադիր կանոնադրութեան հիման վրա։

Դրանից յետոյ նախագահը համագումարին առաջարկում է Յովնանեան դպրոցի ուսուցչական խմբի և հոգաբարձական կազմի մէջ ծագած թիւրիմացութիւնները քննող մասնաժողովի զեկուցումը։

Ինչպէս համաժողովի առաջին նիստերի նկարագրութիւնից յայտնի է, Յովնանեան դպրոցի 1905/06 ուսումնական տարվայ ուսուցչական խումբը համագումարին մի բողոք էր ներկայացրել, որով նա յայտնում էր, որ ինքը նոյն դպրոցի հոգաբարձութեան կողմից եկող ուսումնական տարվայ համար արձակվել է պաշտօնից առանց որ և է պաշտօնական պատճառաբանութեան։ Ուսուցչական համաժողովը այդ կարևոր խնդիրը քննելու համար իր միջից ընտրել էր 7 հոգուց բաղկացած մի յանձնաժողով, որի վերջնական զեկուցումը կարդացվում է այս նիստում։

Այստեղ աւելորդ չենք համարում առաջ բերել ուսուցչական համաժողովի կողմից ընտրված յանձնաժողովի ամբողջ զեկուցումը, որովհետև դա պարզում է Յովնանեան դպրոցի ներկայ կնճռոտ վիճակը։

Ուսուցչական համագումարին։

«Մասնաժողովս իր մի քանի նիստերում ծանօթանալով Յովնանեան օրիորդաց ուսուցչական մարմնի ներկայացրած խնդրի հետ, որով նա խնդրում էր իր կարծիքը յայտնել հոգաբարձութեան այն որոշման մասին, որով Յովնանեան դպրոցի ուսուցչական ամբողջ կազմը հոգաբարձութեան կողմից արձակվում է եկաւ հետևեալ եզրակացութեան։

ա) Հոգաբարձութիւնը իր յունիսի 15 ի որոշման մէջ դպրոցի աւագ-ուսուցչուհի տիկին Նահապետեանի միջոցով յայտնում է ուսուցչական կազմին, որ Յովնանեան-Մարիամեան օրիորդաց դպրոցի մանկավարժական ժողովի բոլոր անդամները այժմէն ազատ են համարվում ուսումնարանում ունեցած իրանց պարտականութիւններից. աչքի առաջ ունենալով որ հոգաբարձութեան այդ որոշումը իր մէջ բուն էութեան ոչ մի պատճառաբանութիւն չէ պարունակում և համարելով այդպիսի վերաբերմունքը կամայականութեան արտայայտութիւն, յանձնաժողովս գտնում է այդօրինակ վճիռը խախտող ուսուցչական կազմի տարրական իրաւունքները. բ) աչքի առաջ ունենալով, որ համաձայն դպրոցի հիմնադրի կամքի հոգաբարձութիւնը պէտք է կազմված լինի ժողովրդից ընտրված չորս անձերից, որոնք ընտրվում են երեք տարի ժամանակով, իսկ այժմ կան դրանցից միմիայն երկու հոգի և դրանց ժամանակամիջոցը վաղուց անցել է և առանց ծխական նոր ընտրութիւնների նոյն անձինք վերահաստատվել են առաջիկայ եռամեակի համար, մասնաժողովս գտնում է, որ հոգաբարձական այս մարմնի գոյութիւնը ապօրինի է, ուստի և նրա որոշումները զուրկ են իրաւական ույժից մինչև հոգաբարձական նոր կազմի օրինաւոր ընտրութիւնը։

Յանձնաժողովի այս զեկուցումը ժողովականներից մի քանիսի կողմից զանազան առարկութիւնների ենթարկվեց, որից յետոյ ուսուցչական համաժողովը գրեթէ միաձայն կայացրեց հետևեալ րէզօլիւցիան.

«Հայ ուսուցչական համաժողովը յայտնում է իր բողոքը Յովնանեան դպրոցի ապօրինի հոգաբարձութեան՝ առանց պատճառաբանութեան նոյն դպրոցի ուսուցչական կազմը արձակելու առթիւ, միևնոյն ժամանակ որոշում է պաշտօն չը ստանձնել այդ դպրոցում մինչև կանոնաւոր հոգաբարձական մարմնի ընտրութիւնը ժողովրդի կողմից»։

Այնուհետև համաժողովը զբաղվեց մի առանձին մասնաժողովի 11 անդամների ընտրութեամբ, որոնց պարտականութիւնը պէտք է լինի ռուսահայոց դպրոցների ուսուցիչների և ուսուցչուհիների պրոֆեսիոնալ միութեան կանոնադրութեան մանրամասնութիւնները մշակելու։ Ընտրութեան արդիւնքը յայտնի կը լինի հետևեալ նիստում։

Ժողովը փակվեց ժամը 2½-ին։

Լ. Բ.

ՆԱՄԱԿ ՆՈՐ-ԲԱՅԱԶԷՏԻՑ

Յունիսի 24-ին

Յունիսի 20-ին, քաղաքային դումայի դահլիճում կայացաւ մեր քաղաքային ստարօստայի և իր օգնականի ընտրութիւնը։ Թեկնածուներ առաջարկվեցին ստարօստայի պաշտօնի համար պ. պ. Յովհաննէս Իւսուֆեան և Գէորգ Արծրունի, իսկ օգնականի համար՝ Կարապետ Տէր-Սահակեանց և Ստեփան Բաւիկեանց։ Դրանցից առաջինը—այժմեան քաղաքային աւագ Գ. Արծրունին հրաժարվելով իր ձայնը դնել, չը մասնակցեց ընտրութեան, իսկ միւս երեք պարոնները քուէարկվեցին։ Սակայն ստարօստայի թեկնածութեան համար հրապարակի վրա մնաց միմիայն պ. Յ. Իւսուֆեանը, որը գաղտնի քուէարկութեամբ ստացաւ 9 ձայն սպիտակ, 6 սև, իսկ օգնականի համար ձայներ ստացան Կ. Տէր-Սահակեանց 9 սպիտակ 5 սև, իսկ Ստեփան Բաւիկեանց՝ 7 սպիտակ, 7 սև։ Այդպիսով ընտրված համարեցին քաղաքային աւագի պաշտօնում պ. Յ. Իւսուֆեան, իսկ օգնականի պաշտօնում՝ պ. Կ. Տէր-Սահակեանց, որոնք պէտք է ծառայեն քաղաքին առաջիկայ քառամեակի ընթացքում։

Թէ ընտրողական թերթը և թէ օրագիրը վարչութեան ամբողջ կազմի ստորագրութեամբ ներկայացվեց Երևանի պ. Նահանգապետին, նորընտիրներին իրանց պաշտօններում հաստատելու համար։ Այստեղ հարկաւոր եմ համարում յիշատակել, որ ընտրութեան միջոցին դահլիճում խռնվել էր մի մեծ բազմութիւն քաղաքացիների, յատկապէս ինտելիգենտ դասակարգից, մի չը տեսնված բան մեր քաղաքի համար։ Հետաքրքիր էր այդ, սակայն թող այդ հետաքրքրութիւնը միշտ վառ մնայ, մեր քաղաքացիների համար նաև միւս խնդիրներում... դա մեր, քաղաքային վարչութեան անդամներիս բուռն ցանկութիւնն է։

Գ. Սիմոնեանց

ՆԱՄԱԿ ՍՂՆԱԽԻՑ

Յունիսի 18-ին

Սրտատրոփ սպասում էինք, թէ ինչպիսի լուծում պէտք է ստանար ջրմուղի հարցը։ Վախենում էինք, որ այս հարցը տապալվէր և իրականութիւն չը ստանար։ Վախենում էինք մանաւանդ, որ մի քանի ձայնաւորներ, ինչպէս հաղորդել էինք, հակառակէին, սակայն հասարակական կարծիքի առաջ հակառակորդները նահանջեցին և չը համարձակվեցան որ և է արգելք դնել այս հարցի առաջ։

Յունիսի 14-ին քաղաքային խորհուրդը քննեց գերմանացի Հէնրիկոս Եանցէնի առաջարկած պայմանները քաղաքումս ջրմուղ անցկացնելու մասին։ Քաղաքային խորհուրդը ապրիլի 11ի նիստում, ծանօթանալով Եանցէնի յայտարարութեան հետ, որոշեց այդ յանձնել մասնաժողովին, որին իսկոյն ընտրեց։ Մասնաժողովը, քննելով Եանցէնի պայմանները, ընդունել էր նրանց մի քանի փոփոխութիւններով։ Յունիսի 14-ի նիստին հրաւիրված էր ինքը Եանցէն։ Վիճելի կէտերի մասին խօսում էին և լուծում։ Ի պատիւ Եանցէնի պէտք է ասել, որ նա նշանաւոր զիջումներ արաւ։ Հարցը վճռվեց դրականապէս երկու կողմերի փոխադարձ համաձայնութեամբ։ Եանցէնի առաջարկած պայմանները մանրամասն տպված են «Մշակի» № 83։ Այժմ հաղորդում ենք այն փոփոխութիւնները, որոնք մտան պայմանների մէջ։ Դրանք են։

1) Եանցէնը ջրաբաշխ ծորակներից 2 դոյլ ջուր պէտք է ծախէր 1 կոպէկով, այժմ համաձայնվեց 1 կոպէկով տալ 3 դոյլ ջուր։

2) Եանցէնը ցանկանում էր բոլոր աղբիւրներն անցկացնել իր իրաւասութեան ներքոյ։ Այժմ նա հրաժարվեց երկու աղբիւրից (Խէզի, Մամուլաանթ ծղալի), որոնք բաց կը մնան. բայց այդ աղբիւրներից իրաւունք ունեն օգտվելու ամենքը, միայն թէ ջրի ծախելու իրաւունքը չէ տալիս։ Միւս երկու աղբիւրները (Թաւզատախիլա, Խափխափա) անցնում են Եանցէնի տրամադրութեան ներքոյ։ Ազատ է մնում և «Մերուբանի» աղբիւրը։

3) Եանցէնը առաջարկում էր շինել 5 ջրաբաշխ ծորակներ։ Նա համաձայնվեց շինել 10 ծորակ։

4) Եանցէնը օրական 5000 դոյլ ջուր ծախելով, հետևեալ իւրաքանչիւր 1000 դոյլ ծախած ջրից տալիս էր քաղաքին 50 կոպ. առաջին հինգ տարում, որը հետևեալ տարիները աւելանում էր 10 կոպ. իւրաքանչիւր հինգ տարի անցնելուց յետոյ։ Այժմ Եանցէնը աւելացրեց քաղաքին տրվելի մասը, համաձայնվելով առաջին հինգ տարին տալ 60 կոպ. և այսպէս իւրաքանչիւր հինգ տարուց յետոյ 10 կոպ. աւելացնել։

5) Եանցէնը պահանջում էր, որ չքաւորներին վկայականներ տայ ոստիկանութիւնը, նա այժմ համաձայնվեց, որ այդպիսի վկայականներ տայ քաղաքային վարչութիւնը։

6) Եանցէնը փոխեց նաև ջրմուղ յետ գնելու առաջարկած գները։ Նա համաձայնվեց 5 տարուց յետոյ ստանալ 40,000 րուբլի և զուտ աշխատանքի 10% մինչև 25 տարի լրանալը, 10 տարուց յետոյ՝ 30,000 րուբլի աշխատանքի 15%, 15 տարուց յետոյ՝ 20,000 րուբ. և 20% աշխատանք, 20 տարուց յետոյ՝ 10,000 րուբ. և 25%։

7) Տներում ճիւղեր անցկացնելու գներն որոշվեց սահմանել Թիֆլիսի գինը 10% աւելացնելով։

8) Եանցէնը համաձայնվեց ձրի բաց թողնել ջուր քաղաքային բուլվարը ջրելու համար, իսկ սպանդանոցի համար փոխանակ 100, տալ օրական 150 դոյլ ջուր։

Քաղաքային խորհրդի այս որոշումը շուտով կուղարկվի նահանգապետին, որից հաստատութիւն ստանալուց յետոյ իսկոյն կը կապվի նոտարական պայմանագիր Եանցէնի հետ։ Լսում ենք, որ Եանցէնը շուտով պէտք է ձեռնարկէ ջրմուղի շինութեան։

Նոյն նիստում քաղաքային խորհուրդը լսեց այրի տիկին Ամիրխանեանի խնդիրը, որով նա խնդրում էր իրան կենսաթոշակ նշանակել, որովհետև իր հանգուցեալ ամուսին Ն. Ամիրխանեան 15 տարի ծառայում էր գաւառական վարչութեան մէջ և երկու տարի վարեց քաղաքագլխի պաշտօնը։ Քաղաքային խորհուրդը միաձայն մերժեց այրու խնդիրը, որովհետև հանգուցեալ Ն. Ամիրխանով, բացի վնասից, ոչինչ օգուտ չը տվեց քաղաքին։

Մաշխաանի գաւառամասի և Ցարսկոյ Կոլոդցի հայերին հովւում էր Գրիգոր քահանայ Մատինեան, որի մահից յետոյ նրա ծուխը հովւում է Նուկրիանու Սահակ քահանայ Տէր-Անտոնեան։ Այժմ Թիֆլիսի կոնսիստորիան կարգադրել է, որ այդ գիւղերն ընտրեն իրանց համար սեփական քահանայ։ Այդ գիւղերը վրացախօս են և լուսաւորված քահանան շատ բան կարող է անել այստեղ։

Յունիսի 17-ին դերասաններ Ռշտունի և Եղիազարեան տեղիս սիրողների մասնակցութեամբ մասնաւոր տան պատշգամբում ներկայացրին «Փրիցէն», «Փաստաբանի մօտ» և «Предположеніе» պիէսները, նոյնպէս վրացերէն մի վօդեվիլ։ Ներկայացումը աջող անցաւ։ Դերասանները բաւական զուարճացրին հանդիսականներին։ Ռշտունին լրջութեամբ կատարեց մայորի դերը, իսկ Զարուբանովի դերում հանդիսականների բուռն ծիծաղը շարժեց։ Եղիազարեանի մասին կարելի է ասել, որ լաւ ոյժ է. նա մանաւանդ ապաւորութիւն թողեց ռուսերէն վօդեվիլի մէջ։ Սիրողներից լաւ կատարեցին իրանց դերերը ուսանող Բուրդուչեան և օրիորդներ Տէր-Մաթէոսեան և Փօձեան։ Լաւ էր և Բուտլիաշվիլին վրացերէն վօդեվիլում։ Ժողովարանի տէրերը ոչ թէ միայն թոյլ չը տուին կլուբում ներկայացում տալու, այլ և կլուբի բեմն էլ բան չը տուին...

Հաղորդել էինք, որ յունիսի 5-ին գործադուլ արին Սղնախի գործակատարները և խանութների և արհեստաւորների աշակերտները։ Մի քանի օրից յետոյ գործադուլը վերջացաւ գործակատարների պարտութեամբ։ Բաւարարութիւն ստացան [illegible] գործակատարները միայն։ Նրանց տէրերը համաձայնվեցին բանալ խանութներ առաւօտեան 6 ժամից մինչև երեկոյեան 6 ժամ. հիւանդութեան դէպքում տալ մի ամսվայ ռոճիկը, իսկ արձակման դէպքում՝ երեք ամսվայ ռոճիկը. խանութի աշակերտներին ձրիաբար չը ծառայեցնել, այլ տալ նրանց շաբաթական 30—50 կ. մինչև 12 տարեկան դառնալը, ապա նշանակել ռոճիկ։ Մինչև այժմ աշակերտները (խանութների) 4—6 տարի ձրի էին ծառայում։

N. N.

ՆԱՄԱԿ ՆԵՐՔԻՆ ԱԽՏԱՅԻՑ

Յունիսի 10-ին

Բաւականին բարեյաջող տարի է այս տարին Դարաչիչագի սարահարթի գիւղերի համար, անձրևային եղանակների շնորհիւ։ Շաբաթներ շարունակ անտ տեղում են պարբերական անձրևներ, իւրաքանչիւր օր համարեա կուտակվում են ամպերը, թափվում փրկարար կաթիլները առատօրէն, նորից ցրվում և արեգակի ճառագայթները կեանք ներշնչում խոնաւ ու թաց բուսականութեամբ [illegible] լանջերին։ Ոռոգման և ջրվելու կողմից այս շրջանի ցանքերը, ինչպէս և խոտատեղերն ու արօտատեղերը, յագեցած պիտի համարել գոնէ մի քանի շաբաթներով և առատ բերք է սպասվում, եթէ այլ բնական պատահարները չը խանգարեն։ Աղքատիկ բնութեան խեղճ ու կրակ ժողովրդի յուսահատական բնոյթ կրող թախծոտ դէմքը այժմ մի փոքր ժպիտ է արտայայտում, ծանր հոգսերի ծանր բեռի թեթևութիւնը զգալով, թէև նորահաս, բայց միապաղաղ աճած արտերի մէջ։ Այս շրջանի հողերը քիչ են, անբաւարար ժողովրդի համար. դրան աւելացրէք նաև այն, որ երկար այդ հողերը մշակվելով յոգնել, ուժասպառ են եղել և այդ պատճառով բացառիկ է այս շրջանի համար, բուսականութեան այն տեսքը, ինչ որ այս տարի։ Անցեալ տարին էլ անձրևների կողմից առատ տարի էր, և հացահատիկների բերքը միջակ, այս տարին աւելի առատութիւն է խոստանում քան անցեալը։

Բնութեան այսպիսի բարեյաջող դրութիւնը, սակայն, մթնում է մի այլ հանգամանքով. այդ հայ-թուրքական ընդհարումների սև ուրուականն է, որը որպէս դամոկլեան սուր կախված է ամբողջ Կովկասի գլխին։ Այս շրջանում թուրքերը փոքրամասնութիւն են կազմում և այդ տեսակէտից դժուար թէ նրանց կողմից որ և է մասսայական ընդհարում լինի, բայց փոքրիկ ընդհարումներ և կենդանիների հօտեր քշելը սարերում այնքան էլ անսպասելի չեն։ Դարաչիչագի հայ ժողովուրդը սովորութիւն ունի ոչխարներ ևս ունենալ, գիւղերի շրջականերում արօտատեղիներ չը կան և նրանք ստիպված են սար դուրս գալ. սարերում նրանք ապրում են մեծ մասամբ չւող թուրքերի և քրդերի հետ սահմանակից, հէնց որ Երևանում կամ մի այլ տեղում հայերի և թուրքերի մէջ ընդհարում է լինում, բոլոր տեղերում էլ նկատվում է անհանգստութիւն և շարժում։ Ահա այդ դրութիւնը, որոշ չափով, սարսափ է ազդել այստեղի ժողովրդի վրա, մանաւանդ Երևանում տեղի ունեցող դէպքերից յետոյ։ Ի՞նչ անի խեղճ ու կրակ ժողովուրդը, ինչ կերպ կարողանայ պաշտպանել իր տնակի և ոչխարի հօտերը, եթէ ոչ զէնքով. ահա այդ զէնքի համար այժմ ծախում է գիւղացին իր վերջին կոպէկը, ծախում է ոչխար, եզ, կով՝ զէնք գնելու համար, որովհետև պաշտպանվելու ոչ մի ձև այլ ևս չէ մնացել։

Օնիկ

ՆԱՄԱԿՆԵՐ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Յունիսի 12-ին

Կարդալով «Մշակի» 119 համարում զետեղված նամակը Թէղուտիայից 103 ստորագրութեամբ՝ պարտք եմ համարում մի քանի տողով պարզել ճշմարտութիւնն այն կէտերի նկատմամբ, որոնք իմ անձնականին են վերաբերում։ Միանգամայն խեղճ ընդհէմ է յօդուածի մէջ եղած այն ակնարկութիւնը, որ ի միջի այլոց ես ևս իմ քննութեան ընթացքում կողմնապահութեամբ վերաբերված լինեմ գործին։ Նախ քան քննութիւնը, մեր առաջարկութեամբ երկու կողմից ժողովրդոց ստորագրութեամբ ընտրվել են երեք-երեք լիազօրներ, որպէս զի վերջիններիս ներկայութեամբ ստանամ վկաներից գործի վերաբերեալ ցուցմունքը։ Այդպէս էլ եղել է և իւրաքանչիւր ցուցմունքից յետոյ արձանագրութեան ներքև ստորագրել են բացի վկայութիւն տուողից նաև լիազօրները և ոչ մի բան չի կատարվել առանց երկու կողմից ընտրված լիազօրների։ Քննութիւնը վերջանալուց յետոյ կանչել եմ մեղադրվող քահանային և յանձնել նրան բոլոր արձանագրութեանց և վկաների ցուցմունքի պատճէնները, քահանայից ստանալով բացատրութիւն բոլոր մեղադրական կէտերի դիմաց, միևնոյն ժամանակ հարց ու փորձի ենթարկելով և այն վկաներին, որոնց մատնացոյց է արել քահանան։ Ինչ վերաբերում է յօդուածի ներքև եղած ծանօթութեան, որպէս թէ ես չեմ կանչել Նոր-Նախիջևանից Ներսէս քահանային և զըրկանով պատճառ դարձել երեխայի մահվան՝ այդ ծանօթութիւնն, ինչպէս նկատած կը լինի ընթերցողը, յետոյ է աւելացրած մեզ յայտնի և դէպի ինձ անձնական հաշիւ ունեցող մի անձի շնորհիւ, որն և եղել է ամբողջ յօդուածի հեղինակը և աւելացրել ներքև «նոյնը». այդ անձի մասին, երբ դէպք կը լինի, մենք շատ բան ունենք ասելու հրապարակով։ Մօտս ունեմ գրաւոր ապացոյց, որ այդ յօդուածին ստորագրող մի գիտակ անձնաւորութիւն բոլորովին անտեղեակ է այդ ծանօթութեան, նոյնն ինձ անձամբ յայտնեցին քահանայի կողմի ժողովրդի լիազօրները։

Տ. Ներսէս քահանային Նոր-Նախիջևանից կանչելն ինձնից չէր կախված։ Ապրիլի 6-ի սինոդի օրագրով քահանան հեռացրած էր ս. Աջի վանք. հետևապէս և ինքս առանց սինոդի թոյլտւութիւն չէի կարող կանչել։

Մինչև ես սպասում էի ստանալ սինոդից կարգադրութիւն այդ մասին ի պատասխան իմ հեռագրի՝ ինձ յայտնեցին, որ երեխան սաստիկ հիւանդ է և պէտք է կանչել հօրը։ Անձամբ գնացի քահանայի տունը, առաջ էլ եղել եմ և տիրուհուն փող յանձնել երեխաների պահպանութեան համար, իբրև ռոճիկ քահանայի. տեսնելով որ երեք տարեկան տղան ծանր հիւանդ է և ըստ բժշկի վկայութեան ստացել է ուղեղի բորբոքումն, ունէր և ընկնաւորութեան հիւանդութիւն, (падучая болѣзнь), ինչպէս և հաստատեց քահանան, ի նկատի առնելով, որ սինոդից կարգադրութիւն կը լինի նրան բերել տալու, անմիջապէս հեռագրեցի քահանային և բերել տուի, ստանալով նաև գեներալ նահանգապետի թոյլտւութիւնը նրա 21 մայիսի № 104 գրութեամբ։ Միւս կողմից միթէ ծանօթութեան հեղինակը չէ հասկանում՝ որ երեխայի հայրը բժիշկ չէր, որ հիւանդին ազատէր ուղեղի բորբոքումն հիւանդութիւնից, եթէ հնարաւորութիւն լինէր երեխային բժշկող յայտնի բժիշկը կը բուժէր։

Իսկ ինչ որ վերաբերում է միւս վիրաւորական խօսքերին այդ արդիւնք է հիւանդոտ ուղեղի և հետևանք վրէժխնդրութեան, որ ես նրանց չը ճանաչելով դուրս եմ արել իմ սենեակից, երբ նա մի որոշ կուսակցութեան կողմից թոյլ էր տուել գալ ինձ մօտ, իբրև հաւատարմատար քահանայի կուսակիցների, հասկացնելով նրան, որ ես կուսակցութիւնները գիտեմ յարգել, բայց այս դէպքում ես գործ ունեմ ժողովրդի և քահանայի հետ անմիջապէս առանց հնչակեան հաւատարմատարի։ Եւ եթէ այդ պարոնը թոյլ է տալիս ինձ «կուսակցած կուսակցութիւնից» կոչել՝ այդ նա ակնարկում է Դաշնակցական կուսակցութիւնը, համարելով Դաշնակցական կուսակցութեան «ազանիք», որովհետև բոլորն էլ հայկական են քահանային։ Այս առիթով երբ դէպք կը լինի ես արդէն աւելի բաց կը խօսեմ իր բոլոր մեքենայութիւններում։ Ինչ վերաբերում է այդպիսի անպատկառների յօդուածների գրելուն և անգիտակ ժողովրդին ստորագրել տալուն, այդպիսի նմուշներ մօտս շատ ունեմ և մամուլի էջերում այդ մասին շատ է գրվել. հէնց «Մշակի» 120 համարում Տ. Նազարեան գեղեցիկ կերպով նկատում է՝ թէ ինչպէս մարդիկ թոյլ են տալիս առանց մի որևէ թղթի բովանդակութեան ծանօթանալու ստորագրել և իրաւացի բացագանչում է. «Այսպէս ուրեմն այսուհետև պէտք է ընտրութիւններ անենք, քուէներ տան մեր քաղաքացիները իրանց առաջնորդներին և հասարակական գործի կանչվողներին»։

Բագրէն վարդապետ

Թէլաւ, յունիսի 4-ին

Կեանքի որ անկիւնն էլ նայելու լինենք, կը տեսնենք, որ նա ենթարկված է ժամանակի յեղյեղուկ պահանջներին, այնտեղ ամեն ինչ մաքրվում է հնութեան փոշիներից։ Նոր խընդիրներ, նոր պահանջներ ու դաւանանքներ են յուզում հասարակութեանը և ամեն ինչ փոխվում է, համակերպվում ու յարմարվում ժամանակի ոգուն։ Հասարակական հաստատութիւնները վերանորոգվում են ու ձգտում բաւարարութիւն տալ ժողովրդական կեանքի հրամայողական կարիքներին, ճաշակին և, որ շրջանի մէջ էլ մտնելու լինենք, առաջադիմութիւնը արդէն զգացնել է տալիս իր ոյժը, իր հետքերը, իսկ յետամնաց ամեն երևոյթ, իբրև աններդաշնակութիւն, աչքի է ընկնում ու սուր կերպով խայթում։

Տարիներ բացակայելուց յետոյ, անցեալ 1905 թւին ինձ վիճակվեց մի քանի օրով ընկնել իմ ծննդավայր Թէլաւ քաղաքը։ Ինձ թւում էր, որ առաջադիմութեան ալիքները նրան էլ խփած կը լինէին, բայց որքան հիասթափվեցի, երբ այցելելով հասարակական մի այնպիսի պատկառելի հաստատութիւն, ինչպիսին է «Գօրիս Ջվարի» եկեղեցին, գտայ նըրան վերին աստիճանի անխնամ դրութեան մէջ, փոշու տակ թաղված։ Զատկի տօնին ես ներկայ գտնվելով յիշեալ եկեղեցում ժամասացութեանը, նկատեցի շատ տգեղ երևոյթներ. անկարգապահութիւն, աղմուկ, քրքիջ, հրհրոց. կարծես յաճախող ժողովուրդը հաւաքվել էր ոչ թէ աղօթելու, այլ ուրախ ժամանակ անցկացնելու, անկարգութիւն էր նկատվում եկեղեցու կահաւորութեան մէջ և նոյն իսկ, քահանայի սպասաւորութեան մէջ։ Մի հին, ժանգոտած, փոշու մէջ, կորած վառարան ընկած էր եկեղեցու մէջ, չը նայելով որ վառարանը չէր վառվում։ Իսկ այդ բոլորի վրա ոչ ոք չէ հսկում ոչ ոք ուշադրութիւն չէ դարձնում։ Եկեղեցու քահանան, երեցփոխը և սպասաւորը իրանց վրա դրված պարտականութեանը գիտակից չէին եղել թէ՞ չէին ուզեցել կատարել, այդ չը գիտենք, միայն թէ հետևանքները անտանելի էին։

Այս տարի դարձեալ Զատկին ես եղայ Թէլաւում, ներկայ եղայ այդ մեծ տօնին ժամասացութեանը իբրև ծխական, բայց ոչ մի փոփոխութիւնը դէպի լաւը, նոյն արտաքին վիճակի մէջ է, ինչ որ նախորդ տարին։ Միթէ ծխականները չեն նկատում այդ բոլորը։ Միթէ ինքը, եկեղեցու սպասաւոր քահանան, բարոյական պարտք չէ զգում բարեկարգ վիճակի մէջ զնելու նոյն եկեղեցին, որ հէնց իր համար նիւթական ապահովութեան աղբիւր է կազմում։ Դա արդէն աններելի ու յանցաւոր վերաբերմունք է, որի շնորհիւ ժողովուրդը սկսում է սառչել նոյն եկեղեցուց և նոյն իսկ ատելութիւն զգալ։ Թէլաւի բոլոր եկեղեցիները գտնվում են բարեկարգ վիճակում և միայն յիշեալ եկեղեցին է ամայի, անուշադրութեան մատնված, անխնամ թողնված, իբրև մի տըխուր բացառութիւն։ Միթէ գործակալ քահանան գոնէ չէ տեսնում այդ բանը։ Մինչև ե՞րբ նա դատապարտված մնայ այդ ցաւալի վիճակին։ Հակառակ դէպքում աւելի լաւ կը լինի փակել եկեղեցին, ու հեռացնել քահանային, մինչև որ նոր քահանայ նշանակվի, որովհետև ներկայ Անտոնեան քահանան պարտք է համարում միայն հսկել, որ ժամանակին գանձանակի տուփը պտտեցնեն ու իր համար փող հաւաքեն։

Ծխականները պարտաւոր են ստուգել եկեղեցու եկեմուտը ու նրա դրամները, և ծխականների աջակցութեամբ, հէնց այս տարի անպատճառ վերանորոգութիւններ կատարել եկեղեցու մէջ։

Նիկոլա Գրիգորեան Տէր-Սարգսեանց

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Յունիսի 25-ին, երեկոյեան ժամի 7-ին Կովկասեան զինւորական նահանգական դատարանը աւարտեց Մինգրելեան 16-րդ գրենադերեան գնդի 27 մեղադրվող զինւորների գործի քննութիւնը։ Դատարանը արտասանեց իր վերջնական վճիռը, որով զինւորներ Մեդվեդեվ, Պարշին և Պերեվերզին ուղարկվում են դիսցիպլինարնի բատալիօն երեք տարով, Անդրէեն և Սպօրնին՝ երկու տարով, Սօկօլ և Դվայէվ՝ մի մի տարով, Իվանչենկօ և Նիկիֆօրօվը՝ վեց շաբաթ բանտարկութեան են դատապարտվում զինւորական բանտում, Մինկէվ, Ֆիդօրօվ, Կօրաբէ և Գրիգորև 20 օրվայ կալանաւորութեան, իսկ Բազայէվ, Կօտտնօվ, Էնդեր, Բօյկօ, Գուրտօվօ, Լինկին, Գրժէնօվսկին, Մոնուկօվ և Բէզզօվ արդար են ճանաչվում։ Հինգ հոգու գործը յետաձգված է. դրանցից 4-ը հիւանդներ են և մէկը փախած։

Երէկ, առաւօտեան ժամի 10-ից երկաթուղու ծառայողները և արհեստաւորները վերսկսեցին իրանց աշխատանքները։ Արձակված ծառայողները վերընդունվել են։ Այդպիսով թիւրիմացութիւնը վերացել է։ Գնացքների երթևեկութիւնը սկսվել է կանոնաւորապէս։ Այդ առիթով երկաթուղու ժամանակաւոր կառավարիչ գնդապետ Նեյգէբաուէրը յունիսի 25-ին հրատարակել է հետևեալ հրամանը. «Թիֆլիսի շոգեշարժների բրիգադայի յունիսի 22-ի գործադուլի առիթով կատարված քննութիւնը ցոյց տուեց, որ այդ գործադուլը յայտարարվել է ոչ ծառայողների նախաձեռնութեամբ, այլ մեծաւ մասամբ նրանց փոքրամասնութեան շնորհիւ։ Այդ պատճառով թոյլատրում եմ նրանց գործի վերադառնալ յունիսի 26-ին ժամի, 12-ից։ Ով որ չի գալ դեպօն այդ նշանակված ժամին և ամենաուշը ցերեկվայ ժամի 12-ին, թէկուզ նոյնիսկ հերթապահութեան էլ նշանակված չը լինի, նա կարձակվի պաշտօնից։ Երկաթուղու աշխատանքների կարգապահութիւնը խախտելու համար շոգեշարժների բրիգադայի յանցաւոր ծառայողները կենթարկվեն դիսցիպլինարնի տուգանքի, որոնց մասին կը յայտարարվի երկաթուղու վարչութեան հրամաններում»։ Ահա յիշեալ հրամանի հիման վրա երէկ, յունիսի 26-ին առ. կառավարիչը առաջարկեց հրաժարեցրած ծառայողներին ծառայութեան դուրս գալ առաւօտեան ժամի 8-ից, նախազգուշացնելով, որ գործի դուրս չեկողները կը համարվեն հեռացված իրանց պաշտօններից։

Նախիջևանից հեռագրում, որ յունիսի 23-ին, առաւօտեան ժամի 11-ին, Բունեաթեանի տանը պայթեցին չորս ռումբեր։ Մարդկային զոհեր չեն եղել։ Պայթումները, խուզարկութիւնները և քննութիւնը շարունակվում են։ Դէպքի տեղի մօտիկ տները շրջապատված են զօրքերով։ Քաղաքում խաղաղ է։

Բագուից հեռագրում են, որ յունիսի 23-ին մօտաւորապէս երեկոյեան ժամի 9½-ին Բօյլշոյ մօրսկոյ և Տօրկօվօյ փողոցների անկիւնում «Պրօգրէսս» կաթնատան մօտ անծանօթի գնդակով սպանված է ոստիկանապետի օգնական Մէջէնին։ Սպանողը անյայտացաւ։

Պարսից հիւպատոս Մուազամ-ուս-սալթանէի ջանքերի շնորհիւ և Բագւում բնակվող պարսկահպատակների աջակցութեամբ «Իթթիհադ» դպրոցի բոլոր պիտոյքները հոգացված են։ Բագւում, Սադօվայա փողոցում, Շիկիրդանովի № 9 բնակարանը տարեկան 2000 րուբլիով վարձված է։ Եւ Թաւրիզում նախկին «Բեհմալ» դպրոցի և լրագրի հիմնադիր, և Եգիպտոսում լոյս տեսնող «Բեհմալ» լրագրի խմբագիր-հրատարակիչ՝ Միրզա Հիւսէյն խան, հրաւիրված է Եգիպտոսից և եկած է Բագու, որպէս «Իթթիհադ» դպրոցի տեսուչ և արաբերէն լեզուների և ֆրանսերէնի ուսուցիչ։ Դպրոցի բացման հանդէսը տեղի պիտի ունենայ ամառվայ արձակուրդներից յետոյ, սեպտեմբեր ամսի սկզբներին։ Այս առաջին տարվայ համար, որպէս աշակերտ պիտի ընդունվին 50 հոգի, ութից տասներկու տարեկան։ Կարելի է, որ պարսկահպատակ 50 աշակերտների ընդունելութիւնից յետոյ, ընդունվին և Կովկասի մահմեդականներից։ Դպրոցի կանոնադրը և դասերի ծրագիրը այս օրերումս կը տպագրվեն։ («Իրշադ»)

Թիֆլիսի գեն. նահանգապետը խնդրել է քաղաքագլխի պաշտօնակատար Չերքեզովից նախօրօք իրան ներկայացնել քաղաքային Դումայի զբաղմունքների բոլոր ծրագիրները, որովհետև նրա կողմից այս կամ այն կարգադրութիւններ կարող են լինել։

Յունիսի 25-ին, առաւօտեան ժամը 10-ին Թիֆլիսի կայարանում, անծանօթ հարուածով սպանվեց Անդրէկով, երկաթուղու ճան. գլխաւոր կոնդուկտոր Միխայլովը։ Սպանողը անյայտացել է։

Ախալցխայի ծխական իգական ուսումնարանի ուսուցիչ Արամ Ս. Տէր-Գրիգորեանը դիմել է նահանգապետին խնդրելով թոյլատրել իրան հրատարակելու ռուսերէն լեզուով հասարակական, քաղաքական և գրական թերթ՝ «Свободный» (ազատ) վերնագրով։ «К. Р.»

Այսօր, երեքշաբթի, ցերեկվայ ժամը 2-ին Փոխարքայի խորհրդի դահլիճում նշանակված է Թիֆլիսում պօլիտեխնիկումի խնդրով զբաղվող յանձնաժողովի նիստը։ Յանձնաժողովը կը քննի բնակիչներին կոչ անելու և պատմական տեղեկութիւն տալու նախագիծը միասին։

Ամսիս 17-ին Վեհափառ Կաթողիկոսը իր կոնդակով ժամանակաւորապէս Էջմիածնի ճեմարանի տեսուչ է նշանակել Մեսրոպ վարդապետ Տէր-Մովսէսեանին՝ տալով նրան իրաւունք մի տարի ժամանակով ուսուցչական խումբ կազմելու, մինչև որ առաջիկայ ժողովրդական համագումարը կը մշակէ ճեմարանի նոր ծրագիրը և կը կազմէ նոր բիւջէ։ Այժմ տեսուչ Մ. վ. Տէր-Մովսէսեանը գտնվում է Թիֆլիսում և հեռացած ու արձակված ուսուցիչների փոխարէն հրաւիրում է նոր ուսուցիչներ։

Գանձակի գեներալ-նահանգապետ Ալիխանովը հեռագրում է. «յունիսի 16-ին Դժէաբէգի շրջանում պրիստաւ Ալիէվը Եկատերինօդարեան գնդի քսան կոզակներով և ոստիկանական պահակների հետ միասին հրացանաձգութեան բռնվեց աւազակների հետ, որի ժամանակ սպանվեց մի կոզակ և մի պահակ։ Աւազակներից սպանվել է մէկը և վիրաւորվել է մէկը, նոյնպէս սպանվել են երկու ձիաներ, երկուսն էլ խլվել։

Թիֆլիսի 4-րդ արական գիմնազիայի ուսուցիչ Նիկոլայ Ջիօյէվ, քահանայ Քրիստափոր Ջիօյէվ և ուրիշները խնդրամատոյց են եղել Կովկասեան Փոխարքային հաստատելու իրանց մշակած «Օսէտինների հրատարակչական ընկերութեան» կանօնադրութիւնը։ Օսէրէն և ուրիշ լեզուներով գրքեր, պարբերական թերթեր հրատարակելու նպատակով։

Ինչպէս լսում ենք, Մինգրելեան 16-րդ գրենադերեան գնդի 8, 9, 13 և 14-րդ վաշտերը մնալու են Թիֆլիսում, իսկ միւս վաշտերը ցրվելու են Կովկասեան շրջանի զօրքերի մէջ։

Մօտաւոր հաշւով, յունիսի 22-ին, գործադուլի համար Թիֆլիսի գեներալ-նահանգապետի նշանակած տուգանքի ընդհանուր գումարը հասնում է 150 հազար րուբլու։ Այդ փողերը կը գործադրվեն յօգուտ ջարդերից ու գործադուլից վնասվածների։

Ա. Խատիսեանը մտադիր է յունիսի 25-ին դումայի դահլիճում մի դասախօսութիւն կարդալու «արհեստական (պրօֆեսսիօնալ) միութիւնների նշանակութեան» մասին։

«Կոչ Դիվէա»-ը հաղորդում է, որ մօտ օրերս Թիֆլիսում կազմակերպվել է Ռ. Ս. Դ. Բ. Կ. մուսուլման ֆրակցիա «Հէյրաթ» անունով, որը մի շարք թռուցիկներով, թուրքերէն լեզուով, մատչելի ձևով, բացատրում է պրօլետարիատի նպատակները և բոլոր ազգերի միութեան անհրաժեշտութիւնը։

Կիրակի, յունիսի 25-ին Հաւլաբարի թատրոնի սիրողների խումբը խաղաց «Զըրկանքի զոհ» պիէսան և «Քաչալ Կարապետ» վօդվիլը։ Խաղը որպէս սիրողների՝ աջող էր. պահպանված էր անսամբլը։ Թատրոնը լի էր։ Բացակայում էր կարգապահութիւնը ամֆիթատրոնում։ Ներկայացումը կրկին ուշ վերջացաւ։

Բագւում զինւորական դատարանը մահվան պատժի է դատապարտել կախաղանի միջոցով Աղամօվին և Դանիէլեանցին գորոդօվոյի սպանութեան համար։ Դատավճիռը ներկայացված է գեներալ-նահանգապետի հայեցողութեանը։ «Ռ. Գ.»

Գանձակից «Кавк.»-ին գրում են, որ Գանձակ քաղաքի ժամանակաւոր զինւորական դատարանի վճիռը, պարսկահպատակ Սահլըբալի—Շիրազի-օղլու և Արեշի գաւառի բնակիչ Ահմէդ-Մուստաֆա օղլու և ուրիշների գործի մասին, որով վերջիններս մեղադրվում են Գիւլջաբաթի կալուածատէր Միրզա Աղասաբօվի վրա զինված յարձակում գործելու ու սպանելու համար, վաւերացնելու ժամանակ առաջին երկուսի համար կայացրած մահվան դատավճիռը կախաղանի միջոցով բարձրագոյն իշխանութեամբ փոխարինել են երկուսի համար էլ քսան և հինգամեայ տաժանակիր աշխատանքի»։

Թիֆլիսի գեներալ-նահանգապետի հարցապնդումին, թէ ինչ պատճառով և ում կարգադրութեամբ յունիսի 22-ի պարապմունքները չեն կատարվել քաղաքային վարչութեան մէջ, քաղաքագլխի պաշտօնակատարը զեկուցել է գեներալ-նահանգապետին, որ, յունիսին 22-ին ծառայութեան չեկող ծառայողները ոչ ոքից դրա համար թոյլտւութիւն չեն խնդրել, չէ եղել նոյնպէս որ և է որոշում այդ օրը պարապմունքները դադարեցնելու մասին։ Ծառայողների այդ օրը իրանց պաշտօնավարութեան չը գալու պատճառները պարզելու համար վերջիններս խնդրում են թոյլ տալ ընդհանուր ժողով գումարելու և գեներալ-նահանգապետի հարցապնդումին պատասխանելու։

Յունիսի 13-ին Բագուեցի միլիօնատէր Հաջի Զէյնալ-Աբդին Թաղիէվը նուիրել է 25,000 րուբլի Թիֆլիսում բացվելիք մուսուլմանուհիների իգական ուսումնարանի համար։

Դերձակների պրօֆեսսիօնալ միութիւնը որոշեց բոյկօտ յայտարարել դերձակ Խապաբօվի արհեստանոցում ձևող Դանիէլեանցին, որովհետև անխնայ կերպով նա ծեծել էր աշակերտին։

Անգործների խորհրդի մէջ ստացվեցին գանգատներ 90 մարդկանցից, որոնց բարօն ֆօն-Կուչէնբախը Արմաւիրից բանւորների պաշտօնով հրաւիրել էր Բօրչալուի գաւառ։ Հրաւիրելու ժամանակ Կուչէնբախը խոստացել էր վճարել օրական 80-ական կոպէկ, բայց երբ այդ 90 բանւորները գնացին Բօրչալուի գաւառը, Կուչէնբախը առաջարկեց 50-ական կոպէկ օրական։ Բանւորները ի հարկէ, մերժեցին։ Բանւորներից 20 հոգու գաւառական ադմինիստրացիան բանտարկեց, իսկ մնացածները ման են գալիս Թիֆլիսում քաղցած-ծարաւ, առանց բնակարանի։ Քննելով նրանց գանգատները, խորհուրդը որոշեց միջնորդել քաղաքային վարչութեան առաջ՝ նրանց տալու ձրի բնակարան և ապրուստի համար փող, նաև թողնել երկաթուղով գնալ իրանց հայրենիքը, տալով նրանց ճանապարհածախսի համար մի որոշ գումար։ Իսկ Թիֆլիսում մնալ ցանկացողներին որոշված է գործ տալ քաղաքային ինքնավարութեան անգործների համար նշանակված աշխատանքներում։

Ռուսաստանի անգործների թիւը վերջին ժամանակներս երկաթուղային և գործարանական աշխատանքների կրճատման պատճառով հասնում է 300 հազար հոգու։ «Рѣчь»

Զեմստվօներից շատերը, քաղաքային հաստատութիւնները և զեմստվային ստատիստիքական մասնաժողովները դիմում են ներքին գործերի մինիստրութեանը խնդրելով վերընդունելու ադմինիստրացիայի կարգադրութեամբ արձակված ծառայողներին իրանց պաշտօնում։ Մինիստրութիւնը այդ խնդիրքները յարգում է։

Պետական պաշտպանութեան խորհուրդը քննելով վերջին ժամանակներս զօրքերի մէջ տեղի ունեցած յուզմունքների հանգամանքները, որոշեց առաջարկել զինւորական մասերի հրամանատարներին ամենալուրջ հսկողութիւն նշանակել զինւորների կեանքի վրա, ժամանակ առ ժամանակ խուզարկութիւն կատարել զինւորների մէջ և մանաւանդ առանձնապէս հետևել, որպէսզի անլեգալ գրականութիւն չը լինի զօրանոցներում։

«Страна»

Վերջին երկու ամիսներումս ներքին գործերի մինիստրութիւնը բաւականաչափ խընդիրքներ է ստացել զեմսկի կառավարիչներից իրանց ծառայութիւնից արձակելու մասին, որովհետև նրանց պաշտօնները ներկայումս աւելորդ են և գիւղացիների մէջ նրանք ոչ մի հեղինակութիւն չեն վայելում։ Մինիստրութիւնը այդպիսի խնդիրքներին սովորաբար պատասխանում է, որ նա պատրաստ է արձակելու նրանց պաշտօնից այն դէպքում միայն, երբ նրանք կը հրաժարվեն կենսաթօշակ ստանալու և պետական ծառայութեան մէջ վերընդունվելու իրաւունքից։

«XX Вѣкъ» լրագիրը տեղեկութիւն է ստացել, որ Մոսկվայի մէջ կայացած զինւորական միտինգներից մէկին մասնակցողների լուսանկարները վերցրել է մի լուսանկարիչ լրտես, որը յետոյ այդ լուսանկարները ուղարկել է Մոսկվայի քաղաքապահ զօրքի գնդերին մի նամակի հետ, որի բովանդակութիւնը մօտաւորապէս հետևեալն է. «Խնդրում եմ համեմատել ձեր գնդի զինւորների դէմքերը լուսանկարիս հետ և յանցաւորներին պատժել ձեր հայեցողութեամբ»։ Թէ քանի զինւորներ են կալանաւորված մի այդ տեսակ «իրական ապացոյցով», ի հարկէ, զինւորական գաղտնիք է մնում։

Պօստ-հեռագրական գլխաւոր վարչութիւնը ստացել է Օչակովսկի պօստ-հեռագրական գրասենեակի պաշտօնեայ Լօպատինի և Նիկոլայէվսկի գրասենեակի պաշտօնէուհի Մաքսիմօվայի գործի մասին կատարված քննութիւնը, որոնք մեղադրվում են լէյտենանտ Շմիդտի հակակառավարչական հեռագիրը Սև ծովեան նաւատորմին հաղորդելու մասին։ Այդ այն ժամանակ էր, երբ Շմիդտը գտնվում էր Օչակովեան բերդի բանտում։ Գործի հանգամանքը հետևեալն է։ Լէյտենանտ Շմիդտը, չը նայելով բերդի և կզզու չափազանց խիստ հսկողութիւնը, կարողանում է տալ հաւատարիմներից մէկին մի գրութիւն, ուղղված նաւատորմի նաւային զինւորներին, որով նա յայտնում է, որ իրան բաղդաւոր է համարում իր պարտականութիւնը կատարելու համար և հրաւէր էր կարդում նաւատորմին պաշտպանել ժողովրդի ազատագրութեան գործը։ Այդ գրութիւնը տարել են հեռագրատուն և ընդունել է գիշերը պաշտօնեայ Լօպատինը, որը իսկոյն հեռագրել է Նիկօլաեւ, որտեղից պաշտօնէուհի Մաքսիմօվան ուղարկել է ուր հարկն է։ Երբ Լօպատինը առաջարկում էր Մաքսիմօվային, ոչնչացնել ստացութեան ժապաւէնը, նրանց լրտեսեցին միջանկեալ կայարանում և կալանաւորեցին։ Երկուսն էլ յանձնվում են զինւորական դատարանին կառավարչական հեռագրութիւնը յեղափոխական նպատակների ծառայեցնելու պատճառով։

Ուսումնական տարվայ սկզբին բարձրագոյն իգական կուրսերում բացվում է իրաւաբանական բաժանմունք։ Հրաւիրված են պրօֆէսօրներ՝ Պետրաժիցկի, Գրիմ, Սերգէեվիչ, Դեակօնով, Կօվալևսկի և Տուգան-Բարանօվսկիյ։

Մինիստրական խորհուրդը հնարաւոր չէ գտել հաստատելու ճանապարհների հաղորդակցութեան մինիստրի առաջարկութիւնը, որով նոյն մինիստրութեան ինժեներների ինստիտուտը ընդունվողներից չը պէտք է պահանջվէր կնունքի վկայական։ Այդպիսով առաջվայ նման հրէաների ընդունելութեան համար սահմանված սահմանափակումը պահպանում է իր զօրութիւնը։

«Торг. Пром. Газ.» թերթը հաղորդում է, որ յունիսի 16-ին ֆինանսների մինիստրութիւնը ներկայացրել է Պետական Դումային հետևեալ նոր օրինագծերը. 1) քաղաքային անշարժ կայքերի հարկերի կանօնադրութիւնը փոփոխելու մասին և 2) ծխախոտի ակցիզը աւելացնելու և ծխախոտի արդիւնաբերութեան մէջ մի քանի փոփոխութիւններ մտցնելու մասին։ Ծխախոտի գլիլզները և ծխախոտաթղթերը տուրքի ենթարկելու օրինագիծը բոլորովին աւարտած ու պատրաստ է և մօտ օրերս կը ներկայացվի նոյնպէս Պետական Դումային։ Ժառանգութեան և մի քանի ուրիշ բաների վրա տուրքեր նշանակելու հարցը արդէն քննված է առանձին մասնաժողովներում և անպատճառ կը ներկայացվի Պետական Դումային հէնց այս նստաշրջանում։ Բացի դրանից մշակվում է մի ուրիշ ծրագիր ևս՝ ակցիզ նշանակելու էլէկտրական ոյժի և լուսաւորութեան գազերի վրա։

ՆՈՐ-ԲԱՅԱԶԷՏԻՑ մեզ գրում են. «Պ. Ս. Բաւիկեանի անունով գոյութիւն ունեցող գրադարան-ընթերցարանը անմխիթար դրութեան մէջ է, չը նայած, որ ընտրված յանձնաժողովի 5 անդամները ինտելիգենտ մարդիկ են։ Հասարակութիւնը յաճախ լրագիրների միայն հին համարներն է կարդում այն ինչ նոր համարները մի քանի, «ընթերցասէրներ» տուն են տանում կարդալու։ Հրաւիրում ենք յանձնաժողովի անդամների ուշադրութիւնը այդ բանի վրա։

ԱԽԱԼՑԽԱՅԻՑ մեզ գրում են. «Բաւական ժամանակ եղանակները մեզանում չորային լինելուց յետոյ, ահա մի շաբաթից աւելի է որ սկսել են ամեն օր յորդառատ անձրևներ տեղալ և բուսականութիւն, մանաւանդ հացաբոյսերին կենդանութիւն պարգևել»։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻՑ

—

Ուրմիա, յունիսի 8

Ուրմիայում բնակված վանեցիները, կամ որ նոյն է ասել վերակենդանացած Արմենական կազմակերպութիւնը, յունիսի 4-ին քաղաքի եկեղեցում կատարել տուեց Վանի կուի նահանջների և հերոսների հոգեհանգիստը՝ տասնամեակի առիթով։ Դիակառքը շքեղ ծաղիկներով և պսակներով զարդարված էր. պատարագիչ քահանան, որ կուիւներից հազիւ ազատվողներից էր՝ մի կարճ դամբանականով օրհնեց հերոսների յիշատակը։ Այնուհետև երկսեռ ժողովուրդը մի երգով առաջնորդվեց դէպի դպրոցի սրահը, ուր պէտք է լինէր հանդէսը։ Սրահը զարդարված էր նշանաւոր հերոսների սև դրօշակներով։

Հանդիսին խօսեցին մի քանի հոգի, որոնք լրիւ պատկերացրին Վանի կուի մանրամասնութիւնները և ցոյց տուին, թէ ինչու 95—96 թւականներին Տաճկահայաստանի ամեն անկիւններում կոտորածներ առաջ եկան, իսկ Վանում այդ փոխվեց կռվի, որի նմանը չէր տեսնված։ Խօսողներից մէկը պատմեց, թէ ինչպէս Վանում գոյութիւն ունեցող երեք յեղափոխական կուսակցութիւնները, որոնցից ամենահինն ու ուժեղը Արմենականութիւնն էր, այդ կռւում շատ համերաշխ էին և կարողացան 5 օր անընդհատ կռիւ մղել կանոնաւոր զօրքի հետ, տէր լինել քաղաքին և գերի վերցնել թնդանօթներ. պատմեց նոյնպէս վանեցի գեղեցիկ սեռի արիութիւնն ու ցոյց տուած օգնութիւնը, երբ կռւող ուժը պէտք էր թողնէր քաղաքը և հեռանար՝ որպէս զի քաղաքը հիմնայատակ լինելուց ազատվէր։

Միւս խօսողը պատմեց կռւողների դէպի Պարսկաստան անցնելը և նրանց հերոսական մահը՝ հանդէպ տասնապատիկ ուժի։ Ինքը պատմողը կուին մասնակցողներից ու ազատվողներից էր, և մատնացոյց էր անում սև դրօշակները, որոնց վրա կար նշանակված նշանաւոր հերոսների անունները. Մուշեղը՝ անկախ կռւողների հրամանատարն էր, որ ընտրվել էր երեք կազմակերպութիւնների ներկայացուցիչներից—Աւետիսեանից, Պետոյից և Մարտիկից. միւս սև դրօշակները կրում էին Գրիգորիսի, Եղիազարի, Աբիկեանի, Զէյթունցի Հաջիի, Սանոյեան եղբայրների, Ուզունի, Բօչարի և այն անունները, որոնք աչքի են ընկել իրանց յեղափոխական գործունէութեամբ ու ընկել այս կռւում։

Հանդիսին երգում էին ազգային-յեղափոխական երգեր. շատ գրաւիչ էին մի տխուր և մի օրօրոցի երգածները. սրանք երգում էին շատ սրտառուչ, որովհետև մօտիկ առնչութիւն էին ունեցել կռւող հերոսների գործունէութեան ու վերջին օրերի հետ։

Հանդէսը թէև երկար տևեց, բայց որովհետև նիւթը ինքնին շատ հետաքրքիր էր ու ոգևորող, անցաւ շատ աշխոյժ. վերջին խօսողը մի քանի խօսքով շեշտեց վանեցիների տիպիկ գծերը ու ինքնուրոյն բնոյթը, որը նրանք ամեն տեղ, թէկուզ Ամերիկայում, հարազատութեամբ պահում են, գոհ են իրանց յատկութիւններից, ինքնահաւան են ու հայրենասէր, թէև այդ յատկութիւնների իւրացումը երբ արտայայտվում է ուրիշ միջավայրում, մի քիչ վանդալական է, այնուամենայնիւ ներկայումս Վանը և վանեցին աչքի ընկնող տեղ են գրաւում մեր ազգի կարմիր հօրիզոնի վրա։

—

Այս շաբաթվայ ընթացքում քաղաքում տեղի ունեն մի շարք քուէարկութիւններ. պէտք է ընտրեն ծխատէր քահանայ, հոգաբարձուներ և՛ գործակալական խորհրդի անդամներ։ Քահանայ ընտրվեց Բարանդուզի ծխատէր Կարապետ քահանան, որը թողնում է այդ Թերքախօս 200 տնից աւելի կորած հայերի հովուութիւնը։ Այս ընտրութիւնը վնասակար է թէ քաղաքի և թէ Բարանդուզի համար, որովհետև քաղաքը չէ կարող ընտանիքաւոր քահանայի նիւթականն ապահովել. այդպէս խեղճ դրութեան մէջ հեռացել են նախկին քահանաներից երկուսը, որոնք կարող էին օգտվել և իրանց գործակալական պաշտօնից. իսկ սա ընտրված է միայն իբրև ծխատէր քահանայ և չէ էլ կարողանայ գործակալութիւն յանձն առնել ու օգտակար դառնալ։

Քաղաքի դպրոցի համար ևս հոգաբարձուներ ընտրվեցին պ. պ. Ծ. Մանասէրեան, Յ. Աֆթանդիլեան և Ն. Շահգեալդեան. ընտրութիւնը աջող է, եթէ միայն չը հրաժարվեն ու գործից փախչեն։ Աւելի կարևոր է գործակալական խորհրդի ընտրութիւնը, որը պաշտօնապէս ճանաչվում է կառավարութեան կողմից և կարող է շատ օգտակար լինել հայ գիւղացիներին։

Բողոքական միսիօնարութիւնը կալայում ամեն տարի մեծ հանդէսով վկայական է տալիս կօլէջն աւարտողներին։ Այս տարի աւարտեցին 3 հոգի։ Այցելելով այս բարձր համարված դպրոցը, մարդ հիանում է զարմացած. անունը շատ շլացնող է։ Կօլէջը զուրկ է գրասեղաններից. միայն բարձր դասարանները նստարան ունեն, միւսները սովորում են կապերտի վրա չոքած։ Անկանոն է ամեն կերպով։ Տաճկաստանում եղած ամերիկական կօլէջները շատ աւելի բարձր են և օգտակար. իսկ այս տալիս է միայն աջողակ խաչագողներ. աշակերտներից մեծ մասը աւարտելուն չեն սպասում, այլ աւելի շատ են ընտրում ճարպիկութեան ասպարէզը և Ամերիկայի ճանապարհը բռնում։ Ուսուցիչներից յայտնի է ռաբբի Փիրան՝ իր հմտութեամբ ու աշխատասիրութեամբ. սա կազմել է բազմաթիւ դասագրքեր իր ազգի լեզուով, որոնք գործածական են բոլոր ասորի դպրոցներում։

Ներկայումս ասորիների մի սահմանափակ շրջանում ծնունդ է առել ազգային ինքնագիտակցութեան ոգին, սկսել են խօսել և տարածել այդ ոգին, հրատարակում են մի թերթ, որը պէտք է ծառայէ իրանց նպատակների տարածման։

—

Ուրմիոյ այս տարվայ ամեն բերքերը կարելի է աջող համարել. սիմը չը կարողացաւ առանձին վնաս տալ ցորենին. բարձրացած քամին նրանց տարել ծովն է լցրել. տեղ տեղ ժանգն է վնասել։ Մթերքների թանգութիւնը նոյնն է։

Շիկակները բռնել են Կուշչիի կեադիւկը, պահապաններից մի քանիսին սպանել են և թալանել սարփարաստի ապրանքները։

Մի քանի օր առաջ շուկայում իրարանցում ընկաւ, շատերը խանութը կողպելով փախչել սկսեցին, պատճառը չիմացվեց. Երևանի դէպքի արձագանքն էր անշուշտ։

Գալուստ

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

ՖՐԱՆՍԻԱ

Դելկասսէի ճառը,—Ֆրանսիայի նախկին արտաքին գործերի մինիստր Դելկասսէն, իբրև ի պատիւ տրված մի խնճոյքում արտասանեց քաղաքական մի կարևոր ճառ, որից առաջ ենք բերում հետևեալ մասերը։

Ֆրանսիայի ներքին քաղաքականութեան մասին խօսելուց, Հանրապետութեան արած առաջադիմութիւնների մասին շեշտելուց յետոյ, նախկին մինիստրը աւելացրեց.

«Ութ տարի առաջ ես պարլամենտում ասում էի, որ մեծ ազգութիւնների կազմութեան հետևանքով, մի բան՝ որը բնորոշում է անցեալ դարու վերջին կէսը, ոչ մի ժողովուրդ ինքնին այնքան զօրեղ չէ, մենակ վարելու համար իր առանձին քաղաքականութիւնը։ Սրանից հետևում է ուրեմն, որ անհրաժեշտ է դաշնակցութիւններ կնքել և թէ որքան այդ դաշնակցութիւնները կանգնած են զգացմունքների և շահերի միմեանութեան վրա, այնքան նրանք տևական են. բացի այդ, ասում էի և այն, որ մի երկրի ազդեցութիւնը՝ մի դաշնակցութեան մէջ, ուղիղ է համեմատում այն ուժերի և առաւելութիւնների հետ, որ ներկայացնում է այդ երկիրը։ Եւ որպէս եզրակացութիւն նկատում էի, որ Ֆրանսիայի նման մի երկիր, որ ունի առաջին կարգի մի բանակ, Եւրօպայում երկրորդ տեղը բռնող ծովային զօրութիւն և մի անքաղդատելի ազգային հարստութիւն, խնայողութիւն, այդ երկիրը նրանցից է, որի դաշնակցութիւնը պէտք է մանաւորապէս ցանկալի և որոնելի լինի։ Ճիշտ էի ասում։ Այս վերջին տարիներումս կնքված դաշնակցութիւններն ու բարեկամութիւնները պերճախօս պատասխան են տալիս այդ հարցման։

Լաւ ուրեմն։ Պահենք թանկագին կերպով, զօրացնենք, ընդարձակենք մեր դաշնակցութիւններն ու բարեկամութիւնները։ Պահպանենք նախանձախնդրութեամբ նրանց էական պայմանները, չը թողնենք որ ցամաքեն մեր զօրութեան աղբիւրները, և, մեր հոգածութեամբ, մեր զօրքերի մասին, մեր փութաջանութեամբ՝ կենդանի պահելու նրա բարոյական քաջութիւնը և կատարեալ՝ նրա սպառազինութիւնը, յայտարարենք, որ մի ժողովուրդի, ինչպէս մի անհատի համար կեանքը այն ժամանակ միայն արժէք ունի, երբ ազատ է, խաղաղութիւնը այն ժամանակ միայն յարգի է և խոր, երբ միայն ուրիշների կամքից կախված չէ. հռչակենք, որ ոչինչ չէ կարող արգելել մեզ պաշտպանելու մեր պատիւն ու մեր շահերը. հռչակենք վերջապէս, որ Ֆրանսիայի յոյսերի առաջ լայն ասպարէզ կայ բացված և որ մենք չենք կարծում ամենևին, որ մեր ճակատագիրը աւարտել ենք։

Ի նպաստ եւ ընդդէմ Կլեմանսօյի,—Ինչպէս յայտնի է, Կլեմանսօն Վարի նահանգի սենատորն է։ Նրա ընտրողների մի մասը քուէարկել է հետևեալ հետաքրքիր որոշումը.

«Բրինեօլի շրջանային խորհուրդը, արժանի՝ Վարի դեմօկրատիային, ցաւում է, որ սենատոր և մինիստր քաղաքացի Կլեմանսօն, Լանի պատնէշի վրա (Կուրիէր ածխագործների մասին է խօսքը), այրիների, որբերի և պրօլետարների կողմը չէ կանգնել. ցաւում է, որ «Mêlée Sociale»-ի հեղինակը բանտարկել տուեց գործադուլ արած հանքային բանւորների պատուիրակներին, ցաւում է, որ պ. մինիստրը, Լիօնում արտասանած իր ճառով՝ մաքուր և անարատ սօցիալիստներին դրեց Հանրապետութեան թշնամիների շարժում»։

Իսկ ընդհակառակը Սէյն-սիւռ-Մէրի բազիկալ խմբերը հրաւիրում են Վարի իրանց կուսակիցներին մասնակցելու մի ընդհանուր ստորագրութեան՝ ներքին գործերի մինիստրին նուիրելու համար արուեստի մի թանկագին առարկայ ի յիշատակ նրայն հռչակաւոր ճառի, որով պատասխանեց Ժօրեսին։

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

24 յունիսի

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 23 յունիսի։ Պետերհոֆ մեկնեց ճապօնական դեսպան Մօտոնօն իր դեսպանութեան բոլոր պաշտօնեաներով։

ՈՒՖԱ, 23 յունիսի։ Անտառները կտրտելուն ընդդիմադրելու համար Բերսկի գաւառի 6 գիւղերի բաշկիրները քշեցին 700 հեծեալ ստրաժնիկներին, շատերին ծեծեցին և 6 ձի խլեցին։

ՕԴԵՍԱ, 23 յունիսի։ Նաւահանգստային ծառայողների գործադուլը վերջացաւ։

ԲԵՐԼԻՆ, 23 յունիսի։ Վախճանվեց ճապօնական զօրքի կազմակերպիչ գեներալ Միկէլ։

ԼՈՆԴՈՆ, 23 յունիսի։ «Ստանդարտ» լրագիրը քննադատելով բրիտանական էսկադրայի առաջիկայում բալտիական ծով մտնելը—ասում է, որ Ռուսաստանին հանել այն պետութիւնների ցուցակից, որոնց նաւահանգիստները այցելելու է էսկադրան,—կը նշանակէ ոչ միայն վիրաւորանք հասցնել ռուս ժողովրդին, այլ և միջամտել ռուսաց ներքին գործերի մէջ։ Լրագիրը յոյս է յայտնում, որ մի քանի ամսից յետոյ Ռուսաստանի և Անգլիայի բարեկամական յարաբերութիւնները կամրապնդվեն, որի բնական հետևանք հանդիսանում է այն հանգամանքը, որ ռուս կառավարութիւնը աշխատում է ընդլայնել իր հպատակների սահմանադրական իրաւունքները։

ԻՒԶՕՎԿԱ, 23 յունիսի։ Շրջակայ հանքային բանւորները ցոյց կազմեցին կօզակների զօրանոցների մօտ։ Զօրքերը կրակ բացին. կան վիրաւորվածներ։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 23 յունիսի։ Միջազգային միջնորդ դատարանի միջազգային դաշնակցութեան ռուս խմբակի բիւրօի նախագահ ընտրվել է Մակսիմ Կովալեվսկին. փոխ-նախագահներ՝ Օստրոգորսկին, Իշխ. Ուրուսով, Իշխ. Դոլգորուկով, Ստախովիչ. քարտուղարներ՝ Պրոտոպոպով, Սվեչին, Իոլլոս. գանձապահ՝ Ռուտցէն։ Միջազգային համագումարի խմբակի պատգամաւորներն են,—Ստախովիչ, Օստրոգորսկի, Րօդիչէվ, Ռուտցէն, Կարեէվ, Եանկովսկի, Վասիլեէվ, Պրոտոպոպով, Իշխ. Ուրուսով, Սվեչին, եպիսկոպոս Րօօզ, Ֆեօդորովսկի։

ԿԱՄԻՇԻՆ, 23 Յունիսի։ 22-ին հին քաղաքում կայացաւ բազմամարդ մի միտինգ. Ամբոխը աշխատեց մտնել նոր քաղաքը, բայց ցրվեց ոստիկանութեան ձեռքով արձակված կրակից։ Վնասվողներ չեղան։ Միւս օրը ամբոխը անցաւ քաղաքով և պահանջում էր խանութները փակել։ Ամեն ինչ դադար առաւ։ Ապա կայացաւ կրկին բազմամարդ միտինգ Դումայի անդամ Կալեանովի ներկայութեամբ։ Հազարաւոր ամբոխը կարմիր դրօշակներով և «Մարսելիէզ» երգելով անցաւ քաղաքով. ընդհարում տեղի չունեցաւ։

ՎԻԵՆՆԱ, 23 յունիսի։ Պաշտօնական լրագրում յայտարարված է, որ հրամայվում է գործադրել Սերբիայից ներմուծվող ապրանքների վրա որոշած մաքսային տարիֆը։

25 յունիսի

ՄՕՍԿՎԱ, 24 յունիսի։ Հասարակական համազեմստվային բիւրօն երկուշաբթի օրը կայանալիք համագումարին առաջարկելու է, որ անպատասխանատու մինիստրութեան օրօք պէտք է հրաժարվել կառավարական մատակարարական գործողութիւններին մասնակցելուց և չը մասնակցել նահանգական վարչութիւնների ու գաւառական համաժողովների մատակարարական խորհրդի գործողութիւնների վրա, հսկելուն։ Զեմստվօների մասնակցութիւնը միմիայն պէտք է արտայայտվի բարեգործութեամբ, որով կառավարութեան այդ նպատակի համար յատկացրած 10 միլ. րուբ. շատ քիչ է։ Բիւրօն առաջարկում է օգնութեան ամբողջ գործը յանձնել ընտրեալ նահանգական և գաւառական տեսչութիւններին։ Երբ համագումարը հաւանութիւն կը տայ այս բոլորին,—բիւրօն այդ մասին էլ կը պատասխանէ մինիստրութեան հարցապնդման։

ԺԸՆԵՎ, 23 յունիսի։ Երեկոյեան ստորագրվեց Ժընեւի կօնվենցիան։ Կօնֆերենցիան կօվենցիան վերաքննելու առիթով ցանկութիւն յայտնեց, որ դաշնագիր ստորագրող մեծ պետութիւնների Հաագի միջնորդ դատարանին յանձնէին քննելու համար այն վէճերը, որ կը ծագեն խաղաղ ժամանակ Ժընեւի կօնվենցիայի քննութեան առիթով։ Այդ ցանկութիւնը ընդունվեց բոլոր մեծ պետութիւնների ներկայացուցիչներից—բացի Ճապօնիայից, Կորէայից և Մեծ-Բրիտանիայից։

ԼՈՆԴՈՆ, 24 յունիսի։ «Թայմսը» բաւարարութիւն է յայտնում այն բանի առիթով, որ ռուս մամուլը շիտակութեամբ է գնահատում Գրէյի՝ բրիտանական էսկադրայի ռուս ջրերը այցելելու մասին արած յայտարարութիւնները։ Այդ այցելութիւնը ցանկալի է երկու կողմերի համար էլ, եթէ այդ բանը քննվի որպէս քաղաքավարութեան մի ակտ դէպի մի երկիր, որի հետ բարեկամական յարաբերութիւնները յարակցված են արդէն։

ՓԱՐԻԶ, 24 յունիսի։ Ծովային վարչութեան բիւդժէտը քննող մասնաժողովի նիստին ծովային մինիստրը բացատրեց, որ այս տարի կառուցվելու են 8 դրահանաւեր։ Վերջում մինիստրն ասաց, որ Ֆրանսիան—հէնց իր շահերի տեսակէտից պէտք է աշխատէ հեռու մնալ զինւորական նաւեր կառուցելով միւս պետութիւններից գերազանցելու մտադրութիւնից։—Սենատի ֆինանսական մասնաժողովում մինիստր Պուանկարէ յայտնեց, որ Ֆրանսիայի այս տարվայ ֆինանսական դրութիւնը այնքան էլ մխիթարական չէ, ինչպէս ենթադրվում էր։ 1906 թ. յունիսի բիւդժէտը կը լրանայ դեֆիցիտով։

ՎԻԵՆՆԱ, 24 յունիսի։ Աւստրօ-ունգարական պատգամաւորութիւնը նիստերը վերջացնելով իր կազմած բանաձևի մէջ ցանկութիւն է յայտնում, որ Աւստրօ-Ունգարական պատգամաւորին յանձնարարվի որ Հաագի կօնֆերենցիայում խօսէ յօգուտ բոլոր պետութիւնների զինումը աստիճանաբար սահմանափակման։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 24 յունիսի։ Լրագիրներում լուր երևաց, որ Պետերբուրգից Կրօնշտադ փոխադրած 14-րդ նաւատորմը զինաթափ է արված։ Այդ լուրը սխալ է։ Բացի վերոյիշեալից, լրագիրները հաղորդեցին, որ «Պանտելէյմօն» և «Զեմա» դրահանաւերի երիտասարդ նաւաստիները միտինգներ են կազմում—որով դնում են տնտեսական և քաղաքական պահանջներ, որ վարչութիւնը յուզված է, որ թնդանօթների փականները գիշերով կորչում են, որ ծովապետ Զուխնինը պալատից չէ դուրս գալիս և որ պալատի ցանկապատը աւելի բարձրացրած է.—բոլոր այդ տեղեկութիւնները մտացածին են։ Լրագիրներից մի քանիսը հաղորդեցին, թէ 18-րդ նաւաստիների խմբի մէջ յուզմունք է տիրում. իրականապէս պատահել է հետևեալը. յունիսի 16-ին 48-րդ նաւաստիների խմբի զինւորները անբաւական են մնում գիշերվայ ընթրիքից. ադիւտանտը գնալով պարզում է, որ խոհարարը եփել է կերակուրը [illegible], որից և կերակուրը սև գոյն է ստացած եղել։ Հէնց այդ պատճառ է դարձել նաւաստիների անկարգութեան։ Ադիւտանտի հրամանով պատրաստվում է նոր կերակուր, և մեղաւոր խոհարարին փոխում են։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 24 յունիսի։ Արդարադատութեան մինիստրը դիմել է Ս. Սինօդին խնդրելով որ սինօդը իր կարծիքը յայտնէ, թէ համաձայն է արդեօք, որ ամուսնալուծական գործերը յանձնվեն քաղաքացիական դատարանին։ Սինօդը պատասխանել է, որ ինքը սկզբունքով կողմնակից է յանձնելուն։—Սիբիրի տեղ այսուհետև որպէս աքսորավայր կը ծառայէ Տօբօլեան վիճակներից մէկն ու մէկը։

ԽԱՐԿՕՎ, 24 յունիսի։ Իւզօվի մօտ տեղի է ունեցել բազմամարդ մի մեծ միտինգ, որին ներկայ են եղել մօտ 10,000 բանւոր։ Կանչվել են կօզակներ և դրագուններ, որոնք վերջում հրացան են պարպել. կան շատ վիրաւորներ, շատ բանւորներ ձերբակալվել են։ Իւզօվի շրջակայքը յուզմունքի մէջ է։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 24 յունիսի։ Կայացաւ Պետական խորհրդի նիստը, որ լսելով միտրօպոլիտ Անտոնիի հրաժարականը, անցաւ ֆինանսական և օրէնսդիր մասնաժողովների ընտրութեան։ Հետևեալ նիստը կայանալու է երեքշաբթի օրը. քննվելու է Դումայի մշակած մահվան պատիժը վերացնելու օրինագիծը։

25 յունիսի

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 24 յունիսի։ Ագրարային մասնաժողովը ընդունել է ագրարային օրինագծի առաջին կէտը հետևեալ խմբագրութեամբ. աշխատաւոր գիւղացիութեան հողերից օգտվելու շրջանը ընդլայնելու համար գրաւվում են 1) գիւղատնտեսութեան աշխատանքի համար պիտանի արքունի, ուղենի, կաբինէտային, եկեղեցական և վանքապատկան հողերը. 2) հողերի ստիպողաբար գրաւման կարգով—և մասնաւոր սեփականութեան հողերը։

ԼՈՆԴՈՆ, 24 յունիսի։ Լօնդօնի լրագիրները տպել են «Րէյտէրի» գործակալութեան թղթակիցներից մէկի խօսակցութիւնը Տրէպօվի հետ։ Ռուսաստանի ներկայ ճգնաժամի ամենալաւ լուծումը Տրէպօվը համարում է Դումայի կենտրոնից մինիստրութեան կազմելը, իսկ ռուս երկրի խաղաղութեան պատասխանատուութիւնը գցում է հրէական ագիտացիայի վրա։ Նա հերքում է իշխան Ուրուսովի յայտարարութիւնը—թէ կենտրոնական իշխանութիւնն է կազմակերպում ջարդերը. Տրէպօվը հակառակ է խօսել ամնիստիայի դէմ. նրա կարծիքով այժմ ամնիստիա անկարելի է տալ, քանի որ լրագիրները օրէց օր լցվում են պաշտօնական անձանց սպանութիւնների լուրերով։ Տրէպօվը նոյնպէս կարելի է համարում մահվան պատիժը վերացնել, և հերքում է այն լուրը, թէ նա գաղտնի դիկտատոր է. շարունակ մինիստրութեան ձեռքերը կաշկանդում է։ Ագրարային հարցի նկատմամբ—նա հակառակ է շահագործութեան սկզբունքը մտցնելուն և կողմնակից է կառավարական հողային բարեկարգութեան նախագծերին։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 24 յունիսի։ Ֆինլանդիայի գեներալ-նահանգապետի դիւանատան վերատեսուչ Մայորսէնը նշանակված է Գրօդնոյի նահանգապետ։ Պետական Խորհրդի կենտրոնը որի կազմի մէջ են մտնում խորհրդի անդամների կէս մասը,—կարծիք է յայտնել վերացնելու այն օրէնքները, որ քաղաքացիական իշխանութեան իրաւունք են տալիս դատապարտվողներին յանձնել զինւորական դատարանին, բայց վճռել է չը փոփոխել զինւորական օրէնքները։ Հաւանօրէն, այդպիսի լուծում կը ստանայ Դումայից մահվան պատիժը վերացնելու օրինագիծը։

26 յունիսի։

ԽԱՐԿՕՎ, 25 յունիսի։ Գիշերս, Կօնտորսկի փողոցում կողոպտման նպատակով սպանութիւն է կատարվել։ Բութ գործիքով գլխից ծանր վիրաւորվել է մանրունքեղէնի խանութի ներսը քնած խանութատէր հայ Պետրոսեանը և նրա գեռահաս աղջիկը։ Պետրոսեանի կինը սպանված է։ Հարևան սենեակում քնած սպանվածի եղբայրը պնդում է, թէ ոչինչ չէ խլել։

ԲԵՐԼԻՆ, 25 յունիսի։ Երկար քննութիւնից և մէկ պալատից միւսը յանձնելուց յետոյ, վերջապէս ընդունվել է նոր օրէնք, որի համաձայն ամենուրեք, ուր հաստատված չեն ժողովրդական ոչ-դաւանական ուսումնարաններ դաւանականների հետ,—գոյութիւն են ունենալու միայն վերջինները։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 25 յունիսի։ Եւրօպական Ռուսաստանի հացի բերքը վերջին երեք շաբաթս էականապէս չէ փոփոխվել։ Աշնանացանը խոստանում է միջին բերք, գարնանացանը՝ միջինից պակաս։

ԿՐՕՆՇՏԱԴ, 25 յունիսի։ Այսօր զինւորա-ծովային դատարանում խօսեցին մնացած պաշտպանները, որոնք պահանջում էին արդարացնել մեղադրեալներին։ Վերջում խօսեց Րօժդէստվենսկին և յայտնեց, որ միմիայն ինքը որպէս գլխաւոր կառավարիչ պատասխանատու է ականատեսի անձնատուր լինելուն։ Նա իր ճառը վերջացրեց հետևեալ խօսքերով. «Պարոնայք դատաւորներ! Նաւատորմիղը և վիրաւորված ռուս ժողովուրդը հաւատում են Ձեզ և սպասում են որ ես պատժվեմ»։

ԲԷԼՈՍՏՕԿ, 25 յունիսի։ Տեղս ժամանած գեներալ Բալուէվը ձեռնարկել է քննել զօրքի բռնած դիրքը ջարդի ժամանակ։

ԼՕՆԴՕՆ 25 յունիսի։ Երէկ Օլտրինգհէմում մինիստրի օգնական Չէրչիլ ճառ արտասանեց, որի մէջ ասաց, որ կառավարական կուսակցութեան անդամներից մի քանիսը՝ ներկայ պարլամենտական նստաշրջանում շատ շուտ աճապարեցին քուէարկել զինւորական վարչութեան բիւդժէտի դէմ. աւելի լաւ էր մի փոքր սպասել տալով զինւորական մինիստրին մեծ ազատութիւն՝ կրճատելու ծախսերը, որը կառավարութիւնը պարտադիր է ճանաչում և վճռել է գործադրել ցամաքային զինման ծախսերի չափով։ Ապա Չէրչիլը խօսելով Լօրդերի պալատի՝ մի քանի օրինագծերի նկատմամբ ունեցած վերաբերմունքի մասին,—ցոյց տուեց, որ լիբէրալները պէտք է որ ջանան կառավարութիւնը պաշտպանելու իրանց հաւատարմութեամբ։ Հետոյ լօրդերի պալատը անուանեց անկենտրոնակ մի ժողով, որ զրկված է գիտակցութիւնից, որ պետութեան մէջ և ոչ մի նորմալ գործունէութիւն երևան չը հանելով հանդերձ գործիք դարձաւ մասնաւոր կուսակցութիւններից մէկի ձեռքում։ Լլօյդ Առևտրի մինիստրի Ջօրջ արտասանած ճառում, լօրդերի պալատը անուանեց պարլամենտական մաշված մեխանիզմ, որին, ժամանակ է դէն շպրտել։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 25 յունիսի։ Երևան է հանված, որ քաղաքային ինքնավարութեան գումարներից իւրացված է 27000 րուբլի։

ԳՐՕԴՆՕ, 25 յունիսի։ Բրիստակի գաւառի Բարեգօվկաչենի գիւղացիները սկսել են վռնտել բանւորներին Պօրօցկի կոմսուհու կալուածքից։ Այդտեղ գտնվող կօզակների և գիւղացիների մէջ ընդհարում է եղել, որի ժամանակ վիրաւորվել են 7 գիւղացի։ Նահանգապետը քննութիւն կատարելու համար ուղարկել է իր պաշտօնեաներից մէկին։

ՊՕԼՏԱՎԱ, 25 յունիսի։ Խարկօվի դատաստանական պալատի վճռով դադարեցրված են սօցիալ-յեղափոխականների (?) լրագիրը և սօցիալ-դեմօկրատների «Накануне» շաբաթաթերթը։

ՄԻՆՍԿ, 25 յունիսի։ Պետական բանկի տեղական բաժանմունքը կալուածատէրերից առաջարկութիւն է ստացել, որից երևում է որ նրանք համաձայն են ծախսել գիւղացիներին 480,000 դեսեատին հող։

ԶԵՄԼԻԱՆՍԿ, 25 յունիսի։ (Վօրօնէժի նահ.)։ Գաւառի մի մասում գիւղացիները ինքնակամ կտրտում են կալուածատէրերի անտառները և հնձում են խոտը։ Տեղ-տեղ գիւղատնտեսական բանւորները գործադուլ են արել, ուժով դադարեցնել են տալիս միւս կալուածատէրերի բանւորների աշխատանքները մի քանի տեղերում դաստակերտները։

ՄԱԴՐԻԴ, 25 յունիսի։ Ֆինանսների մինիստրը առաջարկել է քննել վաղը մինիստրների խորհրդում առևտրական դաշնագրերի հարցը, որ թերևս կարելի լինի վերջ դնել Շվէյցարիայի և Իտալիայի մաքսային կռւին և Ֆրանսիայի դժգոհութիւնը թուլացնել սպանիական մաքսային նոր տարիֆով։

ՎԻՆԴԱՎԱ, 25 յունիսի։ Ժամանեց ճանապարհների հաղորդակցութեան մինիստրը և քննելով նաւահանգիստը մեկնեց Րիգա։

Խմբագիր՝ ԱԼԷՔՍԱՆԴՐ ՔԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչներ՝ ԹԱԳՈՒՀԻ ՏԻԳՐԱՆԵԱՆ
ԻՍԱՀԱԿ ՄԵԼԻՔ-ԱՂԱՄԱԼԵԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ
ԲԺՇԿԱՊԵՏ Բ. ՆԱԽԱՍԱՐԴԵԱՆԻ
Հիմնված 1880 թ.
(Նուկիա, Վօրօնցօվի արձանի հանդէպ)
Ամեն օր, բացի կիրակի օրերից։
ԱՌԱՒՕՏՆԵՐԸ
Բ. Ա. ՆԱԽԱՍԱՐԴԵԱՆ—11—12 ժ. վիրաբուժութեան, վեներական (սիֆիլիս) և միզաստ. հ.
Կ. Մ. ՋԻՆՕՎԱՆԻ—9½—10 ժ. աչքի. ներքին և նեարդային։
Մ. Գ. ԱՒԵՏԻՍԵԱՆ—11—12 ժ. մորթու, վեներակ և վիրաբուժութիւն։
Զ. Ի. ԲԱԲԱՆԱՍԵԱՆՑ—10—11 ժ. մանկաբարձութեան, կանանց և երեխայոց հ.
Ի. Կ. ԳՋԵԼԻՇՎ—12—1 ժ. ականջի, քթի և կոկորդի
Ա. Գ. ՏԱՐԱԳԵՏԵԱՆՑ—1—1½ ժ. ներքին և երեխայոց հ.
ԳՐՆ-ԲԺԻՇԿ Ա. Ի. ՇՉԵՐԲԻՆԻՆԱ—1½—2 ժ. մանկաբարձութեան և կանանց հ.
Գ. Ց. ԳՈՒՐԳԵՆՕՎ—1—2 ժ. կանանց հ. և մանկաբարձութիւն։
ԵՐԵԿՈՆԵՐԸ
Խ. Դ. ԱՐԵԱՆՑ—5—6 ժ. ներքին հիւանդ.
Ա. Մ. ՓՈՒԼԻՆՕՎ—6—7 ժ. ներքին և երեխայոց և ծաղկահատ.
Գ. Ն. ՄԱՂԱՔԵԱՆ—7—7 և կէս ժ. ներքին և երեխայոց հ.
Վճարը 50 կ. նշտարները ձրի։ Հիւանդանոցը ([illegible]) և օպերացիայի համար առանձին։
Հիւանդանոցի վերատեսուչ՝
բժշկապետ Բ. Նախասարդեան

ԲԺՇԿԱՊԵՏ
Տ. ԳԷՈՐԳ-ԲԷԳԵԱՆ
ԱՉՔԻ ՀԻՒԱՆԴՈՒԹԻՒՆՆԵՐ
Ընդունելութիւն ամեն օր
Առաւօտեան ժամի 9-ից մինչև 12
Երեկոյեան » 5-ից մինչև 7
Վելեամինօվսկայա փողոց № 8։ (ե.ռ.)83—100

ԲԺԻՇԿ
Լեւոն Օհանջանեան
Մասնագէտ միզային, վեներական, սիֆիլիսի և կաշուի հիւանդութիւնների։ Ընդունում է առաւօտեան 9-ից մինչև 11 ժամը, երեկոյեան 6—9 ժամ.։ Կանանց և երեխաների համար 11—12 ժ.։ Հասցէն անկիւն Գօլօվինսկի պրօսպէկտի և Կադէտսկայես փողոցի, տուն Թամամշեանի։ Մուտքը Կադէտսկի փողոցից № 2.
(ա. օ.) 182—300

ԱՄՈՒՍԻՆՆԵՐ
Ներսիսեանւարտ փորձված ուսուցիչ և ձեռագործի և կար ու ձևի
ՎԱՐԺՈՒՀԻ
պաշտօն են որոնում։
Հասցէն՝ Верхніе-Акулисы, учителю, до востребованія. (ե.ու.) 1—2

ՄԻ ՕՐԻՈՐԴ, որը աւարտել է գիմնազիայի դասընթացքը և մի տարի պարապել է հայոց դպրոցում ռուսաց լեզուի և թւաբանութեան դասերով, ցանկանում է հայոց դպրոցներում ուսուցչական պաշտօն վարել։
Հասցէն՝ Дербентъ. С. И. Харазянцъ.
(ե.ու.կ.) 1—4

Մի երաժշտագէտ կարող է ուսուցիչ լինել և եկեղեցական խումբ կառավարել Ռուսաստանահայոց որ և է դպրոցում։ Դիմել Էջմիածին Իսահակ վարդապետ Տ. Միքայէլեանի հասցէով։ (ե.չ.) 1—4

ԲԺԻՇԿ
Ա. ՄԽԻԹԱՐԵԱՆՑ
Ընդունում է հիւանդներ հանքային ջրերում, Կիսլօվօդսկ, հիւրանոց Россия № 14. վեներական և մորթու հիւանդութիւններ։ Гостиница Россія № 14. 10—20

ՄԻ ՈՒՍՈՒՑԻՉ ՄԻ ՎԱՐԺՈՒՀԻ
(ամուսիններ, կամ քոյր և եղբայր)։ Ցանկացողները պէտք է դիմեն պայմանների մասին «Մշակի» խմբագրութեան, պ. Հ. Առաքելեան. 2—3

ԲԺԻՇԿ
Պ. Տ. Խախանեան
Ներքին, երեխայոց և վեներական հիւանդ.
Ընդունում է առաւօտ. 9—11, երեկ. 5—8, կիրակի օրերին միայն առաւօտը։
Վելեամինօվսկայա փողոց № 22, Նաւսիկովի տանը։ (ե. հ. շ.) 5—15

Ս. Գ. Շերմազանեան
Ընդունում է հիւանդներին ամեն օր 9 ժ.—2 ժ. և երեկոյեան 4—7 ժամը։ Երևանեան հրապարակ, տ. Գուրգենովի № 7. պօդեզդ նոտար Մելքովի։ (ե.հ.շ.) 20—100

1905 թ. ապրիլի 10-ին տաճկահպատակ, Բիթլիս քաղաքի բնակիչ, 20 տարեկան մի երիտասարդ, Բերօբ Սիմօնեան Սարօյեանցը դերձակ, Թիֆլիսից գնացել է Գանձակ—Բագու և մինչև օրս կորած է. Նրա հայր Սիմօն Սարօյեանցը աղի արտասունքով խնդրում է պ.պ. ընթերցողներից հետամուտ լինել և որդու մասին մի տեղեկութիւն հաղորդել նամակով հետևեալ հասցէով՝ Թիֆլիս Սէրէբրենի փողոց, № 50, Ղազար Վարդանեանցին։
շ. կ. ե. հ. 3—4

ԵՐԿԱԹՈՒՂԻ

(Ամառային գնացքների երթևեկութիւնը)

(Ժամերը նշված են Պետերբուրգի ժամանակով, իսկ փակագծերի մէջինը Թիֆլիսի ժամանակով)։

	Պօստային	Մարդատար.	Արագ.	Ապրանք.
Բագուից դուրս գալը	4 ժ. 53 ր. ցեր.	11 ժ. 03 ր. ցեր.	12 ժ, 20 ր. գիշ.	4 ժ. 03 ր. գիշ.
Թիֆլիս հասնելը	11 » 26 » »	5 ժ. 25 ր. առ.	1 ժ. 30 ր. գիշ.	9 ժ. 37 ր. երեկ.
Թիֆլիսից դուրս գնալը	12 » 26 » »	6 ժ. 01 ր. առ.	—	—
(Թիֆլիսի ժամանակով)	1 » 24 » »	6 ժ. 59 ր. առ.	—	—
Բաթում հասնելը	1 » 38 ր. գիշ.	7 ժ. 07 ր. եր.	—	—
Բաթումից դուրս գալը	5 » 22 » »	5 ժ. 24 ր. ցեր.	—	—
Թիֆլիս հասնելը	6 » 11 ր. եր.	6 ժ. 39 ր. առ.	—	—
Թիֆլիսից դուրս գալը	6 » 58 » »	7 ժ. 37 ր. առ.	5 ժ. 35 ր. ցեր.	10 ժ. 40 ր. գիշ.
(Թիֆլիսի ժամանակով)	7 » 56 » »	8 ժ. 35 ր. առ.	6 ժ. 33 ր. ցեր.	11 ժ. 38 ր. գիշ.
Բագու հասնելը	1 » 20 ր. ցեր.	12 ժ. 42 ր. գիշ.	6 ժ. 19 ր. առ.	3 ժ. 55 ր. ցեր.
Երևանից դուրս գալը	12 » 02 » »	—	—	11 ժ. 26 ր. գիշ.
Կարսից » »	3 » 57 » »	—	—	3 ժ. 14 ր. գիշ.
Ալէքսանդրօպոլից դուրս գալը	7 » 38 „. եր.	—	—	7 ժ. 06 ր. առ.
Թիֆլիս հասնելը	5 » 06 » առ.	—	—	4 ժ. 49 ր. ցեր.
Թիֆլիսից դուրս գալը	11 » 12 » գիշ.	—	—	3 ժ. 25 ր ցեր.
(Թիֆլիսի ժամանակով)	12 » 10 » »	—	—	4 ժ. 23 ր. ցեր.
Ալէքսանդրօպոլից դուրս գալը	10 » 30 » առ.	—	—	2 ժ. 47 ր. գիշ.
Երևան հասնելը	1 » 55 » ցեր.	—	—	6 ժ. 10 ր գիշ.
Կարս հասնելը	4 » 23 » »	—	—	8 ժ. 48 ր. առ.

Երեւանի Հայոց թեմական դպրոցի հոգաբարձութիւն

Ամսիս 19-ին իր որոշման համեմատ հրաւիրում է տեսուչ՝ բարձրագոյն կրթութեամբ մի անձն, յատկացնելով ռոճիկ տարէն 1500 րուբլի և մինչև 12 դաս առաջնակարգ առարկաներից՝ որոշված դասագնով։

Որովհետև հոգաբարձութիւնը տեսչի հետ պէտք է կազմի ուսուցչական խումբ, ուստի հին ուսուցչական խմբի բոլոր անդամները համարվում են արձակված, որոնք եթէ կամենան նոր կազմի մէջ ծառայել, պէտք է նոր խնդիր ներկայացնեն։

Տեսչի և ուսուցչի պաշտօն ստանձնել ցանկացողները պէտք է մինչև տարվայ յուլիսի 15-ը ուղարկեն՝ իրանց խնդիրները, յիշելով իրանց ուսումնական աստիճանը և վարած պաշտօնները և թէ ինչ առարկաներից որքան դաս կը կամենան։

Տեսուչ հրաւիրվող անձը հոգաբարձութեան հրաւէրը ստանալուց անմիջապէս յետոյ պէտք է գայ Երևան, հոգաբարձութեան հետ ուսուցչական խումբ կազմելու համար։

(ե.հ.շ.) 1—6

1905 թ. հոկտեմբերի 1-ի Բարձրագոյն հրամանի համաձայն—մինչև նոր հրաման յայտարարվելը ազատ համարվեցին՝ զինւորական ծառայութեան մէջ մտնելու համար պահանջվող բժշկական քննութիւնից 1) երկաթուղային բոլոր կատեգորիաների ծառայողները, ինչպէս տեղացիները, այնպէս էլ եւրօպական Ռուսաստանից, Սիբիրի, Անդրբայկալի, Շուրջբայկալի, Չին-Արևելեան Ուսուրի և Սամարօ-Զլատօուստեան երկաթուղային գծերից—ինչպէս և զինւորա-սանիտարական գնացքներից ուղարկվածները և 2) Սուդժէնի, Չերեմխովսկի ու Անժէրսկի քարածուխային բանւորները։ Այժմ, զինւորական և ճանապարհների հաղորդակցութեան մինիստրների համաձայնութեամբ—1905 թ. հոկտեմբերի 1-ին Բարձրագոյն հրամանի համաձայն բժշկական քննութիւնից ազատ եղած անձանց ժողովվելու և բժշկական քննութեան ենթարկվելու ժամանակը նշանակված է այս 1906 թ. հոկտեմբեր և նոյեմբեր ամիսներում։

Վերոգրեալի համաձայն այն անձինք, որոնց մասին վերևում յիշատակվում է, եթէ ապրում են Թիֆլիսի նահանգի րայօնում—կարող են խնդրել Թիֆլիսի նահանգական զինւորական վարչութեան՝ թոյլատրելու բժշկական քննութեան ենթարկվել իրանց բնակավայրերի թաղային ոստիկանատներում, ուր որ իրանք ցուցակագրված են՝ որպէս զինւորական ծառայութեան կոչվողներ։

Իսկականի վրա նահանգապետի փոխարէն ստորագրեց փոխ-նահանգապետ Ա. Զէրնիավսկի և հաստատեց Լ. Սպէգալսկի։

2—2

ԲԱՑՎԱԾ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ
„ՆՈՐ ԿԵԱՆՔ“
Գրական, հասարակական և քաղաքական շաբաթաթերթ, որ հրատարակվելու է Նոր-Նախիջևանում—1906 թ. յուլիսի 1-ից։
«Նոր Կեանքը» լինելու է առաջադիմական և պատկանելու չէ որ և է կուսակցութեան։
Շաբաթաթերթիս բաժիններն են 1) Առաջնորդող. 2) Ժամանակակից հարցեր. 3) Տեղական կեանք. 4) Գաւառական կեանք. 5) Գրական բաժին (ինքնուրոյն և թարգմանական յօդուածներ, բելլետրիստիկա, բանաստեղծութիւն և այլն). 6) Արտասահմանի կեանք. 7) Քրօնիկօն. 8) Մամուլ. 9) Թատրոն և գեղարուեստ. 10) Շաբաթվայ լուրեր. 11) Գրախօսութիւն. 12) Թղթակցութիւն. 13) Խառն լուրեր. 14) Յայտարարութիւններ։
Գինն է յուլիսի 1-ից մինչև տարվայ վերջը 2 րուբլի։
Հասցէ՝ Нахичевань На-Дону 1-ая Соборная ул. № 23։
Հրատարակիչ՝ Գր. Բեգլեան
Գր. Անտիփեան
Յակ. Տէր-Մանուէլեան
Յովհ. Խարագեօզեան
Պատասխանատու խմբագիրներ՝
12—12 (կ. ե. հ.)

Տպարան «ՀԵՐՄԵՍ» ընկ.

Электропечатня типографскаго Т—ва «Гермесъ» Мадат. ул. № 5